ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ

ՀՈՒՆԻՍ, 2025 ©

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2023-2025 թվականների գործողությունների իրականացման ծրագրի 2023-2024 թվականներին իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների զեկույցը պատրաստվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից՝ Արցախից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի հետ համագործակցությամբ։

Զեկույցից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է։

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, 2025

ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7. գրասենյակ 2

Հեռախոս՝ +37410 540199

Էլ. փոստ՝ info@armla.am

Վեբ կայք՝ https://armla.am/

© ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՀԿ-ՆԵՐԻ ՑԱՆՑ, 2025

ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7. գրասենյակ 2 (Քարտուղարության գրասենյակ)

Հեռախոս՝ +37410 540199

Էլ. փոստ՝ info@armrights.am

Վեբ կայք՝ https://armrights.am/am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ.....11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....12

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....19

ՈԼՈՐՏ 1: ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ.....19

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.1 ՋՈՒ-երում ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը՝ որպես ՋՈՒ-ում կյանքի իրավունքի իրացման հիմնական բաղադրիչ.19

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.2 Բարձրացնել կյանքի իրավունքի, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ ազատությունից զրկված անձանց իրազեկվածությունը.....21

«ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈԼՈՐՏ 1-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....24

ՈԼՈՐՏ 2. ԽՈՇՏԱՆԳՈՒՄԻՑ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ԿԱՄ ՊԱՏԺԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ.....25

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.1. Ազատությունից զրկման վայրերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի իրականացումը.....25

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.2 ՋՈՒ-երում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի իրականացումը.....27

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.3. Հոգեբուժական հաստատություններում և տուն ինտերնատներում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ, ինչպես նաև մշակել արձանագրելու ձևաթուղթ և ուղեցույց ու սահմանել այդ ձևաթուղթն իրավապահ մարմիններին ներկայացնելու հստակ ընթացակարգ.....29

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.4. Կատարելագործել հոգեբուժական և խնամքի հաստատություններում շահառուի նկատմամբ ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման իրավական կարգավորումները՝ հստակեցնելով ուժի կիրառման հիմքերը, սահմանները, բոլոր հնարավոր իրավիճակները և եղանակները.....30

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.5. Վերապատրաստել զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով: Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռի զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին զարգացնել և ամրապնդել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները վատ վերաբերմունքի

արգելքի թեմայով միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների կիրառման վերաբերյալ 32

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.6. Վերապատրաստել քրեակատարողական ծառայության ղեկավար և ոչ ղեկավար կազմի ծառայողներին, զինծառայողների նկատմամբ բռնության դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող զինվորական դատախազներին և վարույթ իրականացվող քննիչներին ու դատավորներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով: Վերապատրաստումնե րի կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռի զարգացնել և ամրապնդել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները վատ վերաբերմունքի արգելքի թեմայով միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների կիրառման վերաբերյալ.....33

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.8. Ամրապնդել ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների քննություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման կարողությունները.....34

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.9. Վերապատրաստել բուժաշխատողներին, այդ թվում՝ շտապ օգնություն ծառայության և հոգեբուժական հաստատությունների աշխատակիցներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռի զարգացնել և ամրապնդել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները վատ վերաբերմունքի արգելքի թեմայով միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների կիրառման վերաբերյալ 35

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.10. Բարելավել քրեակատարողական հիմնարկների, ինչպես նաև դատարաններում ազատությունից զրկված անձանց համար նախատեսված խցերի պայմանները 37

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.11. Բարելավել ձերբակալված և կալանավորված անձանց (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց) արժանապատիվ տեղափոխման պայմանները.....37

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.12. Ընդունել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ 38

«ԽՈՇՏԱՆԳՈՒՄԻՑ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ԿԱՄ ՊԱՏԺԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈԼՈՐՏ 2-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....40

ՈԼՈՐՏ 3. ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 41

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.1. Օրենսդրորեն նախատեսել կատարողական վարույթների ձգձգման հետևանքով առաջացած վնասի փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց՝ ըստ «Ավակիմյան vs Հայաստան» ՄԻԵԴ որոշման պահանջների.....41

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.2. Օրենսդրորեն նախատեսել ազատությունից զրկված անձանց բողոքների քննության առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ, որով ամրագրվել են ազատությունից զրկված անձանց բողոքների քննության առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ և միջոցներ 41

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.5. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու ձևով, հայցվորներին բոլոր հիմնարար իրավունքի խախտման հետևանքով պատճառված վնասի, այդ թվում՝ ոչ նյութական

(բարոյական) վնասի փոխհատուցման պահանջի հայցերով՝ ի ապահովումն անձի իրավունքի պաշտպանության արդյունավետության.....42

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսել տվյալ քաղաքացու, նրա ընտանիքի անդամների իրավունքը՝ դիմելու հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վճիռը վերացնելու պահանջով.....43

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.7. Հասարակական կազմակերպությունների համար սահմանել դատարան դիմելու իրավունք հանրային նշանակության, կարևորության հարցերով, այդ թվում՝ ինչպես վարչական, այնպես էլ քրեական վարույթներով՝ հաշվի առնելով actio popularis սկզբունքը 44

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.8. Ներդնել «դատավորի ընկեր» (amicus curie) հասկացության մեխանիզմներն ու կանոնակարգերը ներպետական իրավական համակարգում, որը կաջակցի դատարանին՝ տրամադրելով տեղեկատվություն կամ խորհրդատվություն իրավունքի կամ այլ հարակից հարցերի վերաբերյալ.....45

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.9. Կատարելագործել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համակարգը, որով կնախատեսվի. 1. Մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ 1. Նախատեսելով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը յուրաքանչյուր դեպքում, ներառյալ՝ երկու բացասական զեկույցների պայմաններում, դատարանի կողմից քննարկելու պահանջ 2. Բացառել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցի քննարկման և վերանայման համար տարբերակված նախապայմանների և չափանիշների սահմանումը. 3. Սահմանել դատարանի կողմից դատապարտյալի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցի քննարկման և մերժման դեպքում նոր քննարկման համար հավասար ժամկետներ. 4. Քրեակատարողական ծառայության կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու վերաբերյալ զեկույցի կազմման բալային համակարգում բացառել Քրեակատարողական հիմնարկներում անհրաժեշտ պայմանների կամ հնարավորությունների բացակայությունը (օրինակ՝ աշխատանք, վերասոցիալականացմա ն ծրագրեր և այլն) ի վնաս ազատությունից զրկված անձի կիրառումը. 5. Քրեակատարողական ծառայության կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու վերաբերյալ զեկույցի կազմման բալային համակարգում բացառել տարիքի հիմքով անհիմն տարբերակված մոտեցումը.....46

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.10. Ի կատարումն Դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 10-րդ կետի՝ ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիր և վերահսկողություն սահմանել իրագործման նկատմամբ.....47

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.11. Արդարադատության ակադեմիայում դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում մշակել և ներդնել զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող առանձին և համապարփակ վերապարաստման ծրագրեր 48

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.12. Վերանայել անգործունակ ճանաչված անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքին առնչվող կարգավորումները՝ բացառելով իրենց իրավունքներին և

շահերին առնչվող այլ խնդիրներով դատարան դիմելու կամ լսված լինելու իրավունքի անհամաչափ սահմանափակումները 49

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.13. Ընդլայնել դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվող անձանց ցանկը՝ նախատեսելով պետական տուրքի վճարումից ազատում՝ հաշմանդամության խումբ սահմանելու կամ հաշմանդամության խումբը վերականգնելու պահանջով դատարան հայցադիմում ներկայացնելու, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու գործերով 51

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.14. Վերանայել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը՝ սահմանելով հստակ և օբյեկտիվ չափանիշներ մասնավոր սեփականությունը բացառիկ հանրային շահ ճանաչելու համար. նախատեսելով պահանջ և հիմքեր որոշումների ընդունման, այդ թվում՝ հանրային շահի բացառիկությունը գնահատելու, գործընթացների վաղ փուլերում սեփականատերերի, ինչպես նաև՝ կենսագործունեության միջավայրի փոփոխության առումով շահագրգիռ հասարակության ներկայացուցիչների մասնակցության համար. նախատեսելով բացառիկ՝ գերակա հանրային շահի անվան տակ օտարվող գույքի ձեռքբերողների նախկին գործունեության ստուգում (due diligence) և դրա թափանցիկության ապահովում. ապահովելով ձեռքբերողների կողմից պետությանը ներկայացվող ֆինանսական երաշխիքների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը. երաշխավորելով պետության հանդես գալը որպես կողմ և պատասխանատվությա ն ստանձնումը՝ ձեռքբերողների պարտականությունների պատշաճ կատարման ապահովման և քաղաքացիների իրավունքների պաշտպանության նպատակով...52

«ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈԼՈՐՏ 3-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....54

ՈԼՈՐՏ 4. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ 55

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.1. «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքում սահմանել խտրականության հասկացությունը, տեսակները, դրանից պաշտպանության միջոցները և մեխանիզմները, իրավահավասարության հարցերով զբաղվող մարմնի կազմավորման/ գործող մարմիններից որևէ մեկի կազմում կառույցի ստեղծման, գործունեության երաշխիքները՝ միջազգային չափանիշներին համապատասխան Իրավահավասարության խորհուրդը ներկայացնում է խորհրդատվական եզրակացություն, առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության սահմանադրական և վճռաբեկ դատարաններին՝ վերջիններիս կողմից հարցման հիման վրա, խտրականության վերաբերյալ գործերով օժանդակ դիրքորոշում (amicus curiae) ներկայացնելու վերաբերյալ, նպաստում է իրազեկվածության բարձրացմանը և այլն.....55

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.2. Դատավորների, քննիչների, դատախազների և ոստիկանների (համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները) համար շարունակել իրականացնել վերապատրաստումներ խտրականության արգելքի, իրավահավասարության ապահովման թեմաներով: Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռեն շարունակաբար կատարելագործել գիտելիքները, հմտություններն ու կարողությունները իրավահավասարության ապահովման, խտրականության արգելքի թեմաներով միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և միջոցների վերաբերյալ 56

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.3. Բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների համար շարունակել իրականացնել վերապատրաստումներ խտրականության արգելքի, իրավահավասարության ապահովման թեմաներով: Վերապատրաստումների կազմակերպումն

ու անցկացումը հնարավորություն կընձեռեն շարունակաբար կատարելագործել գիտելիքները, հմտություններն ու կարողությունները իրավահավասարության ապահովման, խտրականության արգելքի թեմաներով միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և միջոցների վերաբերյալ.....58

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.4. Շարունակել բարձրացնել իրավահավասարության, բոլոր հիմքերով խտրականության արգելքի վերաբերյալ իրազեկվածությունը հանրության շրջանում.....59

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.5. Ատելության խոսքի առավել մեղմ դրսևորումների համար սահմանել վարչական կամ քաղաքացիական. պատասխանատվության միջոցներ: 61

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.6. Շարունակել իրականացնել իրազեկման արշավներ, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի ներգրավմամբ՝ ուղղված ատելության խոսքի, դրա բացասական ազդեցության բացառմանը, այլակարծության և կարծիքի ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի խթանմանը:.....61

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.7. Ոստիկանության, քննչական մարմինների, դատախազության համար, մշակել և հաստատել խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության շարժառիթով գործերի քննության ուղեցույցներ.....63

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.8. Ստեղծել օրենսդրական երաշխիքներ ազգային փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար, որով ներպետական իրավական համակարգում կնախատեսվի ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող առանձին և համապարփակ օրենսդրություն 64

«ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ» ՈԼՈՐՏ 4-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....66

ՈԼՈՐՏ 5. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 67

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.1. Երաշխավորել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամներին հոգեբանական անվճար օգնության շարունակական տրամադրումը և դրա հաշվառումը 67

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.2. Երաշխավորել գերությունից վերադարձած անձանց/զինծառայողների ֆիզիկական և հոգեկան առողջական օգնության համակարգը՝ տրամադրելով անհատական, երկարաժամկետ և հետևողական աջակցություն.....68

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.3. Լրամշակել «Անհայտ կորած անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը և կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ վերաբերելի իրավական ակտերում, որով նախատեսվում է նախ անհայտ կորածի իրավական կարգավիճակի սահմանում, ինչպես նաև անկախ մասնագիտական կառույցի ստեղծում, որը պետք է զբաղվի անհայտ կորածի ճակատագրի և գտնվելու մասին տեղեկությունների ձեռքբերմամբ: Օրենքի նախագիծը ենթադրում է նաև անհայտ կորածի հարազատների հանդեպ պարտավորությունների ստանձնում և անհայտ կորելու հանգամանքների քննություն.....69

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.4. Իրականացնել հոգեկան առողջության վերապատրաստումներ սպա-հոգեբանների՝ շեշտադրելով գործնական խնդիրները: Զինված ուժերի մշտական բարոյահոգեբանական կայուն կարգավիճակը մշտապես ապահովելու համար անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել սպա հոգեբանների գիտելիքներն ու հմտությունները.....70

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.5. Մշակել բժշկական գաղտնիքին վերաբերող տեղեկատվական ձեռնարկ բուժաշխատողների համար և հաստատել ենթաօրենսդրական իրավական ակտով.....71

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.6. Ապահովել պացիենտի՝ իր առողջական վիճակի վերաբերյալ տվյալների հասանելիությունը 72

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.7. Կազմակերպել և իրականացնել հանրային իրազեկման արշավներ վճարովի և անվճար բժշկական ծառայությունների և դեղերի մասին, ինչպես նաև առողջության համապարփակ ապահովագրության ներդրման վերաբերյալ 73

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.8. Ստեղծել տեղեկատվական համակարգ կամ առկա համակարգում ապահովել պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, անվճար և համավճարային սկզբունքով մատուցվող բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությանը....74

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.9. Բարձրացնել հանրային իրազեկվածությունը պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին Իրազեկվածությունը նպատակ ունի պալիատիվ բժշկական օգնության վերաբերյալ բնակչության համար ապահովել ամբողջական և մատչելի տեղեկատվություն 75

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.10. Իրականացնել պալիատիվ խնամքի և ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ շարունակական վերապատրաստումներ՝ բուժաշխատողների համար 76

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.11. Բարձրացնել հղիության արհեստական ընդհատման ծառայությունների մատչելիությունը կանանց խոցելի խմբերի համար....77

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.12. Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործողների բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ օրենսդրության բարելավում 78

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.13. Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործողների թվաքանակի նվազեցման և առանց թմրամիջոցների առողջ հասարակություն ունենալու վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների իրականացում....79

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.14. Մշակել «Անհայտ կորած անձանց մասին» օրենքի նախագիծը և կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ վերաբերելի իրավական ակտերում՝նախատեսելով անհայտ կորածի իրավական կարգավիճակը, ինչպես նաև անկախ մասնագիտական կառույցի ստեղծումը, որը պետք է զբաղվի անհայտ կորած անձանց ճակատագրի և գտնվելու մասին տեղեկությունների ձեռք բերմամբ: Օրենքի նախագիծը ենթադրում է նաև անհայտ կորածի հարազատների հանդեպ պարտավորու-թյունների ստանձնում և անհայտ կորելու հանգամանքների քննություն 80

«ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈԼՈՐՏ 5-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ....82

ՈԼՈՐՏ 6. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ....83

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 6.1. Վերանայել հավաքների և այլ զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանության գործողությունները կանոնակարգող «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» օրենքները՝ միջազգային չափորոշիչների և մարդու իրավունքների համապատասխանելիության առնչությամբ 83

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 6.2. Բարձրացնել Ներքին գործերի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումների (հասարակական կարգի պահպանությանն առնչվող) ղեկավարների և ծառայողների՝ հավաքների ազատության վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև

ձևավորել հավաքների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության, հույզերի և զանգվածի կառավարման վրա հիմնված պրակտիկան....83

«ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՈՒՂՈՐՏ 6-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ....86

ՈՒՂՈՐՏ 7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 87

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 7.1. Երաշխավորել շարունակական վերապատրաստումը միջին և ավագ դպրոցների ուսուցիչների համար ժողովրդավարություն, օրենքի և իրավունքի գերակայություն վերաբերյալ թեմաներով: Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռի զարգացնել և ամրապնդել ուսուցիչների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները մարդու իրավունքների պաշտպանության Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպայի խորհրդի միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների վերաբերյալ....87

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈՒՂՈՐՏ 7-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ....89

ՈՒՂՈՐՏ 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ, ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ....90

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 9.1. Կազմակերպել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց սոցիալական ինտեգրման կամ վերաինտեգրմանն ուղղված օգնությունը՝ ապահովելով անձանց ինքնուրույնությունն ու ներառականությունը հասարակական կյանքում....90

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 9.2. Կազմակերպել պրոբացիայի շահառուներին և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած անձանց սոցիալական ինտեգրմանը կամ վերաինտեգրմանն ուղղված օգնությունը՝ ապահովելով անձանց ինքնուրույնությունն ու ներառականությունը հասարակական կյանքում 91

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ, ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈՒՂՈՐՏ 9-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 93

ՈՒՂՈՐՏ 10. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 94

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10.1. Բարձրացնել երեխայի իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոգեկան առողջության, մտավոր և տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների, փախստական և ապաստան հայցող երեխաների, արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությանը 94

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10.2. Սահմանել երեխաների իրավունքների խախտումների հասկացությունը և ստեղծել դրա հաշվառման ու վարման միասնական վիճակագրական համակարգ՝ սահմանելով «երեխայի իրավունքների խախտում» հասկացությունը և լիազորող նորմ՝ երեխայի իրավունքների հաշվառման և վարման միասնական վիճակագրական համակարգի վերաբերյալ....96

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10.3. Կատարելագործել կատարողական վարույթի շրջանակներում ծնողի և մերձավոր ազգականների հետ երեխայի տեսակցությունների ապահովման կարգը 97

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10.4. Հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը՝ բարելավել երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման ընթացակարգը, ներառյալ՝ առանց ուղեկցության և ծնողներից բաժանված երեխաների համար....98

«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ» ՈԼՈՐՏ 10-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ.....101

ՈԼՈՐՏ 11. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ.....102

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 11.1. Մշակել և ընդունել մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի տեսչական մարմինների կողմից տրված հանձնարարականների կատարման, զեկույցների ներկայացման և հաջորդիվ իրականացվող քայլերի ապահովման ազգային մեխանիզմ 102

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ» ՈԼՈՐՏ 11-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ.....104

ՈԼՈՐՏ 12. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....105

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 12.1. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձանց վերաբերյալ համապարփակ և ամբողջական վարչական տվյալների՝ ներառյալ նրանց անհատական տվյալների, հաշվառման հասցեի, տրամադրվող կենսաթոշակի, նպաստի, ինչպես նաև գույքի (այդ թվում՝ հողի) նկատմամբ իրավունքների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում.....105

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 12.2. Մշակել և տարածել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկման նյութեր 106

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 12.3. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ապահովում.....107

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՈԼՈՐՏ 12-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....108

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....109

1. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 109

2. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.....109

3. ՎԵՐ ՀԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 110

Ա. Մեթոդական խնդիրներ և առաջարկներ.....110

Բ. Բովանդակային խնդիրներ և առաջարկներ.....111

Հապավումների ցանկ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԶՈՒ	Զինված ուժեր
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա
ԼՂ	Լեռնային Ղարաբաղ
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Կառավարությունը 2023 թվականի սեպտեմբերի 28-ին N 1674-Լ[1] որոշմամբ հաստատեց «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2023-2025 թթ. գործողությունների ծրագիրը (այսուհետ նաև՝ Ռազմավարություն և Գործողությունների ծրագիր), իսկ 2024 թվականի ապրիլի 12-ին N 515-Լ[2] որոշմամբ փոփոխություններ և լրացումներ կատարեց Ռազմավարության մեջ:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության հիմնական նպատակներն են՝ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը և երաշխավորումը, ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունների պաշտպանությանն ու երաշխավորմանն ուղղված պետական հետևողական քաղաքականության իրականացումը, ՀՀ միջազգային պայմանագրերով երաշխավորված քաղաքացիական և քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության կառուցակարգերի բարելավումը՝ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան, հաշվի առնելով մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների առաջարկությունները և հանձնարարականները, մարդու իրավունքների և դրանց պաշտպանության միջոցների մասին հանրային իրազեկության բարձրացումը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ), պաշտոնատար անձանց, ինչպես նաև հասարակության և քաղաքացիների կողմից սեփական իրավունքների պաշտպանության խրախուսումը, մարդու 16 իրավունքների և դրանց պաշտպանության միջոցների վերաբերյալ գիտելիքների տարածումը՝ կրթական ծրագրերի իրականացման միջոցով, նախանշել մարդու իրավունքների միասնական քաղաքականության ուղղությունները՝ հիմքեր ստեղծելով հետագա տարիներում իրականացվելիք գործողությունների համար:

Ռազմավարության 65 գործողությունները ներկայացված են 12 ոլորտներում, որոնցից 2-ը՝ կյանքի իրավունքի, 13-ը՝ խոշտանգումից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի, 14-ը՝ գործի արդար քննության իրավունքի, 8-ը՝ իրավահավասարության, խտրականության արգելքի, 14-ը՝ առողջության պահպանման իրավունքի, 2-ը՝ հավաքների ազատության, 1-ը՝ կրթության իրավունքի, 1-ը՝ կարծիքի արտահայտման ազատության, 2-ը՝ սոցիալական ապահովության, նվազագույն կենսապայմանների իրավունքի, 4-ը՝ երեխայի իրավունքների, 1-ը՝ մարդու իրավունքների ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդման և 3-ը՝ Լեռնային Ղարաբաղից (ԼՂ) բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության ոլորտներում: Դիտարկվող ժամանակահատվածում մշտադիտարկման ենթակա գործողությունների թիվը 60-ն է (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության ոլորտները և 2023-2024 թվականներին իրականացման ենթակա գործողությունների թիվը

[1] 28.09.2023 թվականի N 1674-Լ որոշումը հասանելի է այստեղ.
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183444

[2] 12.04.2024 թվականի N 512-Լ որոշումը հասանելի է այստեղ.
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=191782

Ոլորտներ	2023-2024 թվականներին իրականացման ենթակա գործողությունների թիվը[3]
Ոլորտ 1: Կյանքի իրավունք	2
Ոլորտ 2: Խոշտանգումից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունք	11
Ոլորտ 3. Գործի արդար քննության իրավունք	12
Ոլորտ 4. Իրավահավասարություն, խտրականության արգելք	8
Ոլորտ 5. Առողջության պահպանման իրավունք	14
Ոլորտ 6. Հավաքների ազատություն	2
Ոլորտ 7. Կրթության իրավունք	1
Ոլորտ 9. Սոցիալական ապահովության, նվազագույն կենսապայմանների իրավունք	2
Ոլորտ 10. Երեխայի իրավունքներ	4
Ոլորտ 11. Մարդու իրավունքների ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդում	1
Ոլորտ 12. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանություն	3
Ընդամենը 2023-2024 թվականներին իրականացման ենթակա՝	**60**

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն (ԻՀԱ)՝ համագործակցելով Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի հետ, և նպատակով ունենալով իրականացնել անկախ մոնիթորինգ և գնահատում, իրականացրել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրա իրականացման 2023-2025 թվականների միջոցառման ծրագրի 2023-2024 թվականներին իրականացման ենթակա գործողությունների կատարման մշտադիտարկում: Մշտադիտարկման դաշտային աշխատանքներն իրականացվել են 2025 թվականի փետրվար-մայիս ամիսներին և **մշտադիտարկել են այն գործողությունները, որոնք նախատեսված էին կատարման 2023-2024 թվականների ընթացքում**: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն զեկույցը ընդգրկում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրա իրականացման 2023-2025 թվականների միջոցառման ծրագրի միջանկյալ տարվա՝ 2023-2024 թվականների գործողությունների կատարողականը, հետևապես ակնկալվում է, որ այն կօժանդակի ՀՀ ԱՆ-ին՝ գործող Ռազմավարությունը բարելավելու նպատակով կատարել փոփոխություններ, ինչպես նաև ապագայում նոր ռազմավարություն մշակելու աշխատանքներում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Մշտադիտարկման նպատակներ

Ռազմավարության գործողությունների ծրագրերի մշտադիտարկման և գնահատման նպատակներն են՝

1. գնահատել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի՝ 2023-2024թթ. իրականացման ենթակա գործողությունների կատարման ընթացքը,
2. պարզել այն գործողությունները, որոնք կատարվել են, կատարվել են մասնակի կամ չեն կատարվել, դրանց պատճառները, կատարել այդ գործողությունների ընթացակարգային (քանակական) գնահատումներ,
3. ըստ ընտրանքի կատարել որոշ գործողությունների ազդեցության մակարդակի (որակական) գնահատումներ։

բ. Գնահատման աղյուսակ

Մշտադիտարկման են ենթարկվել այն գործողությունները, որոնք նախատեսված էին **իրականացնել 2023-2024թթ.-ին,** հետևապես **գնահատման արդյունքները վերաբերում են 2023-2024թթ.-ին նախատեսված գործողությունների (կատարողականի թիրախների) և արդյունքային քանակական և որակական (ըստ ընտրանքի որոշ գործողությունների դեպքում) ցուցանիշների ռազմավարական նպատակի հարաբերակցությանը, և թե ինչքանով է կատարված գործողությունը նպաստել ակնկալվող ազդեցությանը։** Ռազմավարության և գործողությունների ծրագրի բաժնի արդյունքային մոնիթորինգի ցուցիչները մշտադիտարկման չեն ենթարկվել, քանի որ դա ենթադրում է ոչ թե տարեկան գործողությունների ծրագրի կատարողականի մշտադիտարկում, այլ ամբողջ ռազմավարության կատարողականի եզրափակիչ գնահատումը։

Ռազմավարության 2023-2024թթ. իրականացման ենթակա գործողությունների, դրանց արդյունքային քանակական և որակական ցուցանիշների, ինչպես նաև Գործողությունների ծրագրով սահմանված գործողությունների համար նախատեսված «Ակնկալվող արդյունք» սյունակում զետեղված չափանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս այս գործողությունների իրականացումը գնահատող ցուցանիշները բաժանել երկու խմբի, ինչպես ներկայացված է ստորև՝

〉 Ընթացակարգային (քանակական) ցուցանիշներ

Ընթացակարգային ցուցանիշներն ընդհանուր առմամբ անդրադառնում են այն գործողություններին, որոնք ուղղված են որոշակի ընթացակարգերի ավարտին, օրինակ՝ իրավական փաստաթղթի նախագիծը Կառավարություն կամ ԱԺ ներկայացնելը, վերլուծության կամ ուսումնասիրության իրականացումը, նոր էլեկտրոնային համակարգերի ներդրումը և այլն: Ընթացակարգային ցուցանիշները վերաբերում են ելքային մակարդակի արդյունքներին և գնահատվում են արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման (անգլերեն՝ results-based monitoring) հիման վրա: Ակնկալվում է, որ 2023-2024թթ. ընթացքում իրականացվելիք գործողությունները գնահատման իրականացման ժամանակահատվածում, որն է՝ 2025 թվականի փետրվար-մայիս ամիսները, արդեն իսկ պետք է ավարտված լինեն: Անհրաժեշտ է նշել, որ գործողությունների ծրագիրն ընդգրկում է հիմնականում ընթացակարգային ցուցանիշներ

ենթադրող գործողություններ։ Ընթացակարգային ցուցանիշների դեպքում մշտադիտարկումն արձանագրում է՝ թե որ փուլում է գտնվում գործընթացը։

Ընթացակարգային ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման հետևյալ կատեգորիաները՝

1. **Գործողությունը կատարվել է - գործողությունը գնահատվում է «կատարված է»,** եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են դարձել վկայող փաստեր (անգլերեն՝ evidence) առ այն, որ դիտարկվող ժամանակահատվածի համար գործողության 91-100%-ը կատարվել են։
2. **Գործողությունը կատարվել է մասնակի** - գործողությունը գնահատվում է «կատարվել է մասնակի», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ դիտարկվող ժամանակահատվածի համար գործողության 31-90%-ը կատարվել է։
3. **Գործողությունը կատարված չէ -** գործողությունը գնահատվում է «կատարված չէ», եթե դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ, կամ կատարվել է նախատեսված աշխատանքների մինչև 30%-ը, կամ տվյալ գործողության վերաբերյալ մշտադիտարկման խմբին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել։

Ըստ վերևում նշված ընթացակարգային ցուցանիշների կատարողականի գնահատման կատեգորիաների արդյունքների, դիտարկվող ժամանակահատվածի՝ 2023-2024 թվականների (միջանկյալ) գնահատման արդյունքն արտահայտված է հետևյալ վարկանիշային ցուցանիշներից որևէ մեկով.

1. **կատարված է ամբողջությամբ** (դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված աշխատանքներն իրականացվել են)՝ **1 միավոր.**
2. **կատարված է մասնակի** (դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված որոշ **աշխատանքներ** կատարվել են, սակայն դրանք չեն գերազանցում նախատեսված աշխատանքների կեսը)՝ **0.5 միավոր.**
3. **կատարված չէ** (դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված որևէ **աշխատանք** իրականացված չէ)՝ **0 միավոր։**

Գնահատումն իրականացվել է վարիացիոն շարքի համակշռված միջինի մեթոդով հետևյալ բանաձևով՝ (**ամբողջությամբ կատարված գործողությունների քանակ**x1+**մասնակի կատարված գործողությունների քանակ**x0.5+**չկատարված գործողությունների քանակ**x0)/60[4]*100:

Մշտադիտարկման շրջանակներում դիտարկման են ենթարկվելու թվով 60 գործողություն, որոնք ենթակա էին կատարման 2023-2024 թվականների ընթացքում։

Հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարությունը չունի առանձին մեթոդոլոգիա՝ ընթացակարգային (քանակական կամ գործոնային) ցուցանիշների կատարողականի գնահատման և դրա արդյունքների հաշվարկման նպատակով։
Սույն մեթոդոլոգիան մշակվել է ԻՀԱ-ի կողմից՝ Արցախից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի հետ համագործակցությամբ։

[4] Բանաձևում 60-ը 2023-2024 թվականներին կատարման ենթակա գործողությունների թիվն է։

Ազդեցության մակարդակի (որակական) ցուցանիշներ

Որակական ցուցանիշներն անդրադառնում են ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներին և Գործողությունների ծրագրերի ներքո իրականացվող գործողությունը կապում են ռազմավարական նպատակների մակարդակում ակնկալվող ազդեցության և/կամ որակական ցուցանիշների հետ: Սույն մշտադիտարկման շրջանակներում ազդեցության մակարդակի գնահատումը կատարվելու է գործողությունների ծրագրով նախատեսված **իրազեկման աշխատանքների և տարբեր թիրախային խմբերի համար կազմակերպված վերապատրաստումների մասով:** Այս ցուցանիշները գնահատվելու են մշտադիտարկման խմբի փորձագետների կողմից և վերաբերելու են կատարված գործողությունների միջոցով ռազմավարական նպատակների մակարդակում սպասվող արդյունքներին և ելակետային տվյալներով ներկայացված խնդիրների հասցեագրման պոտենցիալին: Այս գնահատման ընթացքում հաշվի են առնվելու նաև ստուգման միջոցների օբյեկտիվությունն ու ամբողջականությունը:

Գնահատումը իրականացվել է ՀՀ արդարադատության նախարարությանը (ԱՆ)՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում քաղաքականությունը մշակող և մոնիթորինգ ու գնահատում իրականացնող իրավասու մարմնին ուղղված ռազմավարության և գործողությունների ծրագրի վերաբերյալ տեղեկատվական հարցումներին՝ հարցաշարերին տրված պաշտոնական պատասխանների, ֆոկուս խմբային քննարկումներ (ՖԽՔ) և գրասենյակային ուսումնասիրության/փաստաթղթերի վերլուծության արդյունքում դուրսբերված տեղեկատվության հիման վրա:

Այս ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման երեք չափանիշ.

1. **Գործողությունը իրականացված է** - գործողությունը գնահատվում է «իրականացված է», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ գործողության իրականացումը ապահովվել է ռազմավարական նպատակի մակարդակում սպասվող արդյունքը:
2. **Գործողությունը իրականացված է ոչ ամբողջական** - գործողությունը գնահատվում է «իրականացված է ոչ ամբողջական», եթե տվյալ գործողության իրականացումը չի ապահովել ռազմավարական նպատակի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ ամբողջական արդյունքը (ապահովել է մասնակի արդյունք) կամ չի հանդիսացել նպաստող գործոն այդ արդյունքի ամբողջական նվաճման համար կամ տվյալ գործողության իրականացման համար պատասխանատու պատկան մարմինների կողմից մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել փաստեր, որոնք կվկայեն ռազմավարական նպատակի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքի ամբողջական իրականացումը:
3. **Գործողությունը իրականացված չէ** - գործողությունը գնահատվում է «իրականացված չէ», եթե տվյալ գործողության իրականացման ուղղությամբ որևէ էական միջոցառումներ չեն ձեռնարկվել կամ ձեռնարկված միջոցառումները ուղղված չեն ապահովելու ռազմավարական նպատակի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքը կամ չեն հանդիսացել նպաստող գործոն այդ արդյունքի համար կամ տվյալ գործողության իրականացման համար պատասխանատու պատկան մարմինների կողմից մշտադիտարկման խմբին չեն

ներկայացվել փաստեր, որոնք կվկայեն ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքի իրականացումը:

Օրինակ՝ մեկ միջոցառման համար որպես կատարողական թիրախ 2023-2024 թվականների համար նախատեսված է՝ «Վերապատրաստվել է հոգեբուժական հաստատությունների աշխատակիցների 50%-ը: Որպես արդյունքային որակական ցուցանիշ նախատեսված է՝ «Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն:»: Տվյալ պարագայում նախատեսված չէ հրապարակել գիտելիքի ստուգման հաշվետվություններ, ելակետային տվյալները թերի են և ոչ հիմնավոր: Մասնավորապես՝ հայտնի չէ, թե ինչ եղանակով է ստուգվել հոգեբուժական հաստատությունների աշխատակիցների գիտելիքներն ու հմտությունները՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով և որպես ելակետային տվյալ նշված չէ հոգեբուժական հաստատության աշխատակիցների ընդհանուր քանակը, որի հիման վրա հնարավոր կլիներ չափել վերապատրաստում անձանց աշխատակիցների տոկոսային հարաբերակցությունը: Այս պարագայում կատարված գործողությունները չեն կարող ամբողջապես նպաստել հետևյալ ռազմավարական նպատակի կատարմանը. «խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ»: Հետևապես սույն միջոցառման կատարումը գնահատվում է **Իրականացված է ոչ ամբողջական**:

*Յուրաքանչյուր ոլորտի համար այս գնահատման ընթացքում փորձագիտական թիմի կողմից հաշվարկվել է **կատարողական ցուցանիշ**, որն իրենից ներկայացնում է «իրականացված» գործողությունների միջոցով տվյալ ռազմավարական խնդրի մակարդակում միջանկյալ կամ վերջնական արդյունքի նվաճումը:*

Հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ-ը չունի առանձին մեթոդոլոգիա՝ ընթացակարգային (քանակական կամ գործոնային) ցուցանիշների կատարողականի գնահատման և դրա արդյունքների հաշվարկման նպատակով:
Սույն մեթոդոլոգիան մշակվել է ԻՀԱ-ի կողմից՝ Արցախից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի հետ համագործակցությամբ:

գ. Գնահատման մեթոդներ

Մշտադիտարկման նպատակներին հասնելու համար կիրառվել է **արդյունքների համադրման մոտեցումը**՝ համադրելով որակական և քանակական տվյալները: Տվյալները հավաքագրվել են առաջնային և երկրորդային աղբյուրներից: Հետազոտության մեթոդները ներառում են տեղեկատվության հարցումները, գրասենյակային ուսումնասիրությունը/փաստաթղթերի վերլուծությունը, այդ թվում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի մոնիթորինգի 2023 և 2024 թվականների հաշվետվությունը, միջազգային կազմակերպությունների զեկույցները և այլ փաստաթղթեր, ՖԽՔ-ները: Կազմակերպվել է 2 ՖԽՔ՝ ներառական և մասնակցային ձևաչափով, որին մասնակցել են գործողությունների կատարման համար պատասխանատու պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կառույցների ու

ՔՀԿ-ների ներկայացուցիչներ, ոլորտային փորձագետներ և իրավաբաններ: Նաև հարկ է նշել, որ սույն զեկույցը ձեռնպահ է մնացել ՀՀ ԱՆ-ի հրապարակած մոնիթորինգի հաշվետվություններում առկա տեղեկությունները **ամբողջապես** արտացոլելուց, որը կծանրաբեռներ զեկույցի ծավալը, հետևապես, հետաքրքրված անձինք Ռազմավարության առանձին գործողությունների արդյունքների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու նպատակով կարող են ուսումնասիրել մոնիթորինգային զեկույցները[5]:

Աղյուսակ 2. ՖԽՔ -ների պետական մարմինների, այլ շահագրգիռ կառույցների և մասնակիցների ցանկը

#	Անվանումը	Ներկայացուցիչների թիվը
1.	Արդարադատության նախարարություն	1
2.	Պաշտպանության նախարարություն (ՊՆ)	1
3.	ՀՀ վարչապետի աշխատակազմի միջազգային -իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	1
4.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՍՆ)	8
5.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ԱՍՀՆ)	3
6.	Ներքին գործերի նախարարություն (ՆԳՆ)	1
7.	Քննչական Կոմիտե (ՔԿ)	1
8.	Բարձրագույն դատական խորհուրդ (ԲԴԽ)	1
9.	Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ)	1
10.	Երևանի քաղաքապետարան	3
11.	ՀՀ արդարադատության ակադեմիա	2
Ընդհանուր		**23**
	ՔՀԿ-ներ, փորձագետներ, իրավաբաններ	
1.	ՔՀԿ-ներ, փորձագետներ, իրավաբաններ	13
Ընդհանուր		**13**

Մշտադիտարկման արդյունքների հիման վրա մշակվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրի՝ **2023-2024թթ. իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների զեկույցը** (այսուհետ՝ Զեկույց): Զեկույցի նախագիծը ներկայացվել էր գործողությունների կատարման համար պատասխանատու պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կառույցների կարծիքի, որի արդյունքում ստացված դիտարկումների ու առաջարկությունների մի մասը ընդունվել են և տեղ են գտել Զեկույցի սույն տարբերակում:

[5] ՀՀ ԱՆ-ի հրապարակած ՄԻՊ ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի հաշվետվությունները հասանելի են այստեղ. https://moj.am/page/575

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՈԼՈՐՏ 1: ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ապահովել կյանքի իրավունքի արդյունավետ պաշտպանությունը զինված ուժերում, քրեական վարույթի ընթացքում, իրավապահ մարմինների հետ առնչվելիս, քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրելու կամ հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու ընթացքում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.1 ԶՈՒ-երում ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը՝ որպես ԶՈՒ-ում կյանքի իրավունքի իրացման հիմնական բաղադրիչ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել կյանքի իրավունքի արդյունավետ պաշտպանությունը ԶՈՒ-երում, քրեական վարույթի ընթացքում, իրավապահ մարմինների հետ առնչվելիս, քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրելու կամ հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու ընթացքում	ԶԼՄ-ներով, ինչպես նաև ավագ դպրոցներում տարածվել է ԶՈՒ-երում զինվորական կարգապահության կարևորության վերաբերյալ 2 տեսաձայնագրություն (սոցիալական հոլովակ): Տեսաձայնագրությունները (սոցիալական հոլովակ) մշակվել են միջոլորտային մասնագիտական խմբի (հոգեբան, իրավաբան, ռազմագետ և այլն) կողմից՝ միջազգային լավագույն փորձին (ներառյալ՝ գենդերազգայունության բաղադրիչը) համապատասխան և տեսաձայնագրությունները (սոցիալական հոլովակ) տարածվել ենլրատվամիջոցներից օգտվելու օրինաչափությունների (լրատվամիջոցների	ՀՀ ՊՆ	ԿԳՄՄՆ Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ ՆԳՆ Գլխավոր դատախազություն Քննչական կոմիտե ԱԱԾ Հանրային հեռարձակողների խորհուրդ ՀՀ ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ** Ռազմավարական նպատակին ուղղված գործողությունները **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

	սպառման վիճակագրություն, տարիքային-հոգեբանական առանձնահատկություններ և այլն) հաշվառմամբ: Կատարելագործվել են սպա-հոգեբանների 40%-ի՝ զինծառայողների հետ տարվող աշխատանքներին առնչվող գիտելիքներն և հմտությունները և վերապատրաստումներն իրականացվել են Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպայի խորհրդի միջազգային-իրավական չափանիշների հիման վրա՝ վերապատրաստումներն իրականացնելով առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ, իսկ վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն			

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է՝** հաշվետվության կարգավիճակի մասին բաժնում նշելով, որ Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) երևանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում մշակվել է ԶՈՒ-երում զինվորական կարգապահության կարևորության վերաբերյալ 2 տեսաձայնագրություն, սակայն դեռ չեն տարածվել ԶԼՄ-ներով, ինչպես նաև ավագ դպրոցներում: Միևնույն ժամանակ, հաշվետվության ակնկալվող արդյունքների բաժնում նշված է, որ հրապարակվել է միայն մեկ տեսաձայնագրություն (սոցիալական հոլովակ), մինչդեռ ըստ պլանի՝ պետք է մշակվեր և հրապարակվեր առնվազն երկու տեսաձայնագրություն:
Գործողության շրջանակներում կազմակերպվել են երկօրյա դասընթացներ, իրականացվել է վերապատրաստում սպա-հոգեբանների և բարձր հրամանատարական կազմի համար համար: Ըստ նույն աղբյուրի՝ վերապատրաստվել է սպա հոգեբանների 40%-ը:

Մշտադիտարկման խումբը գործողությունը գնահատում է որպես մասնակի կատարված, քանի որ այն չի ապահովել նախատեսված արդյունքային ցուցանիշները: Ըստ նախատեսված արդյունքների՝ պատրաստված տեսաձայնագրությունները պետք է տարածվեին ԶԼՄ-ներով:

Անցկացված ՖԽՔ-ի ընթացքում մշտադիտարկման խմբին հայտնի դարձավ, որ, որպես կանոն, տեսանյութերը տարածման նպատակով ուղարկվում են բոլոր ԶԼՄ-ներին: Այնուամենայնիվ, տարածման արդյունավետության վերաբերյալ, այդ թվում նյութերը հրապարակած ԶԼՄ-ների քանակի, դիտումների քանակի և հասանելիության մասին տվյալներ չկան:
Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ սպա հոգեբանների վերապատրաստումների մասով քանակական ցուցանիշները կատարվել են (վերապատրաստվել է սպա հոգեբանների 40%-ը), սակայն բացակայում է դրանց որակական գնահատումը, մասնավորապես՝ առկա չեն տեղեկություններ վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում արդյո՞ք վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն:

Այսպիսով, բացակայում են վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Կատարող մարմինների կողմից չեն ստուգվել ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ համադրել արդյունքները:

Ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ ապահովվել է միայն մասնակի արդյունք, ինչպես նաև բացակայում են ապացույցներ, որ վերապատրաստումները նպաստել են ռազմավարական նպատակի իրագործմանը:

Այսպիսով, գործողությունը իրականացված է ոչ ամբողջական, քանի որ՝

- Պատրաստվել են տեսաձայնագրություններ, որոնք սակայն ամբողջական չեն հրապարակվել (քանակական ցուցանիշ)
- Իրականացվել են վերապատրաստումներ թիրախային խմբերի համար (քանակական ցուցանիշ)
- Սպա հոգեբանների վերապատրաստման մասով ապահովվել է միայն մասնակի արդյունք, քանի որ չկան ազդեցության գնահատման մեխանիզմներ, այդ թվում իմացության աճի մասով (որակական ցուցանիշ)
- Բացակայում են փաստեր, որոնք կվկայեն ռազմավարական նպատակի մակարդակում սպասվող արդյունքի ամբողջական իրականացումը

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ, այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել ռազմավարական նպատակի նվաճմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.2 Բարձրացնել կյանքի իրավունքի, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ ազատությունից զրկված անձանց իրազեկվածությունը

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք

մակարդակում				
Ապահովել կյանքի իրավունքի արդյունավետ պաշտպանությունը զինված ուժերում, քրեական վարույթի ընթացքում, իրավապահ մարմինների հետ առնչվելիս, քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրելու կամ հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու ընթացքում	Ազատությունից զրկման վայրերի 40%-ում փակցվել են կյանքի իրավունքի, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ պաստառներ, որոնց բովանդակությունը մշակվել է միջազգային-իրավական չափանիշներին և լավագույն փորձին համապատասխան: Պաստառները փակցվել են ազատությունից զրկված անձանց համար հասանելի վայրերում (յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկում առնվազն 5 պաստառ): ԶԼՄ-ների միջոցներով տարածվել է ազատությունից զրկված անձանց իրավունքների վերաբերյալ 2 տեսաձայնագրություն (սոցիալական հոլովակ): Տեսաձայնագրությունները (սոցիալական հոլովակ) մշակվել են միջոլորտային մասնագիտական խմբի (հոգեբան, իրավաբան, քրեագետ և այլն) կողմից՝ միջազգային լավագույն փորձին (ներառյալ՝ գենդերազգայունության բաղադրիչը) համապատասխան և տեսաձայնագրությունները (սոցիալական հոլովակ) տարածվել են լրատվամիջոցներից օգտվելու օրինաչափությունների (լրատվամիջոցների սպառման վիճակագրություն, հոգեբանական	ՀՀ ԱՆ	Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

	առանձնահատկություններ և այլն) հաշվառմամբ:			

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է,** միջազգային գործընկերների աջակցությամբ մշակվել և «Աբովյան», «Արմավիր», «Սևան», «Արթիկ» և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկներում փակցվել են ազատությունից զրկված անձանց հիմնարար իրավունքների վերաբերյալ բացատրական պաստառներ: Ազատությունից զրկման վայրերի ևս 40 %-ում փակցվել է պաստառներ: Նույն աղբյուրի համաձայն՝ տեսաձայնագրությունները ենթակա են հրապարակման:

Ըստ սույն գործողության արդյունքային ցուցանիշների, յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկում նախատեսված էր փակցնել առնվազն 5 պաստառ: ՀՀ ԱՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ փակցված պաստառների քանակը եղել է հետևյալը. Արմավիր ՔԿՀ-ում՝ 21, Գորիսում՝ 5, Վարդաշենում՝ 5, Նուբարաշենում՝ 5, Դատապարտյալների հիվանդանոցում՝ 5, Երևան-Կենտրոնում՝ 5, Սևանում՝ 11, Վանաձորում՝ 9, Արթիկում՝ 12:

ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ մինչ այժմ մշակվել է միայն 1 տեսաձայնագրություն, որը վերաբերում է խոշտանգումների թեմային, սակայն այն հաշվետու ժամանակահատվածում չէր հրապարակվել: Տարածման ժամկետի հետաձգումը ԱՆ-ը հիմնավորվում էր նրանով, որ հանրության հետաքրքրվածության բարձրացման նպատակով նպատակահարմար է այն տարածել ավելի ուշ փուլում: Միևնույն ժամանակ, մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել հանրային հետաքրքրվածության հետազոտության կամ համանման այլ գործիքի արդյունքներ:

Այսպիսով, ստացվում է՝ պաստառները փակցվել են ազատազրկման վայրերի 40%-ում, իսկ նախատեսված երկու տեսաձայնագրություններից պատրաստվել է միայն մեկը, որը չի հրապարակվել: Մինչդեռ վերջիններս պետք է մշակվեին միջոլորտային մասնագիտական խմբի կողմից՝ միջազգային փորձին և գենդերազգայունության սկզբունքին համապատասխան, ինչպես նաև տարածվեին՝ հաշվի առնելով տեղեկատվության սպառման և ընկալման օրինաչափությունները: Այս պահանջները փաստացի չեն իրականացվել՝ տեսանյութի չհրապարակման հետևանքով:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

«ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈԼՈՐՏ 1-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	2	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	2	100%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 1-ը համապատասխանում էր սահմանված հատկանիշներին, որի գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ՈԼՈՐՏ 2. ԽՈՇՏԱՆԳՈՒՄԻՑ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ԿԱՄ ՊԱՏԺԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.1. Ազատությունից զրկման վայրերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի իրականացումը

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով	Ընդունվել են անանուն հաղորդումների ներկայացման իրավական հիմքերն ու ընթացակարգերն ամրագրող ենթաօրենսդրական ակտեր (կառավարության որոշում, նախարարի հրաման), որի հիմնավորման համար կատարվել է ուսումնասիրություն՝ միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համահունչ: Մշակվել են «Ձերբակալված եվ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենք(ներ)ում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ փաթեթները և ուղարկվել են ՀՀ Ազգային ժողով:	ԱՆ	Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**

անհրաժեշտ գործիքակազմ:	Անանուն հաղորդում տալու ընթացակարգերը ներդրված են			

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է մասնակի**:

Հաշվետվության ուսումնասիրության և ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ մշակվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների նախագիծ, որն ուղարկվել է ՀՀ կառավարության քննարկմանը և հետագայում վերադարձվել է դիտարկումներով: Ըստ ՀՀ ԱՆ-ի՝ գործողության լիարժեք իրականացման հետաձգման պատճառ է ներկայացվել այն հանգամանքը, որ նախագիծը մի քանի փուլով շրջանառության է ենթարկվել:

Այսպիսով, սույն գործողության ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներն են անանուն հաղորդումների ներկայացման իրավական հիմքերի ու ընթացակարգերն ամրագրող ենթաօրենսդրական ակտերի (կառավարության որոշում, նախարարի հրաման) ընդունումը, որի հիմնավորման համար նախատեսված էր կատարել ուսումնասիրություն՝ միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համահունչ, մշակել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենք(ներ)ում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ փաթեթներ և ուղարկել դրանք ՀՀ ԱԺ, որի արդյունքում պետք է ներդրվեին անանուն հաղորդում տալու ընթացակարգերը:

Մշտադիտարկման խումբը ուսումնասիրել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխությունները[6] և արձանագրել է մի շարք բացթողումներ: Մասնավորապես, նախագծում բացակայում են կոնկրետ կարգավորումներ, ինչպիսիք են՝ անանուն հաղորդման սահմանումը, անանուն հաղորդումների ներկայացման կոնկրետ ուղիները, հաղորդումների գաղտնիության երաշխիքները և անանուն հաղորդում ներկայացրած անձի պաշտպանվածության երաշխիքները, այդ թվում վնասակար գործողությունների կանխարգելման մեխանիզմները, հաղորդման քննության ընթացակարգը և իրավասու մարմինները/անձինք, պատասխանի տրամադրման ժամկետները և եղանակները, գաղտնիության պաշտպանման տեխնիկական միջոցները և այլն:

Նախագծում նշվում է, որ «պայմաններն ու քննարկման կարգը սահմանվում են ներքին կանոնակարգով», ինչը ևս պարունակում է լուրջ ռիսկեր: Մասնավորապես, ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերում կարող են ընդունվել սահմանափակող կանոններ, բացակայեն արտաքին հսկողության գործիքները, անհնարին է դառնում անկախ գնահատումը, առաջ են գալու թափանցիկության և հաշվետվողականության լուրջ հիմնախնդիրներ, և առհասարակ՝ սույն մեխանիզմի արդյունավետ գործարկման հնարավորությունը վտանգվելու է:

Մշտադիտարկման խմբին տրամադրած տեղեկատվության համաձայն՝ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու հատուկ մեխանիզմի՝ արկղերի ներդրման

[6] «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխությունները հասանելի են այստեղ. https://www.e-draft.am/projects/7942

համապատասխանությունը միջազգային ստանդարտներին ապահովելու նպատակով իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն և Քրեակատարողական ծառայությունը Europris հարթակի միջոցով խնդրին վերաբերելի հարցում, որի արդյունքում պարզվել է, որ որոշ երկրների օրենսդրություններ չեն նախատեսում հստակ կարգավորումներ, մինչդեռ այլ իրավակարգերում գործում են որոշակի իրավական նորմեր և/կամ մեխանիզմներ: Այս համատեքստում հատկանշական է, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների համար ստեղծված են լայն հնարավորություններ «Թեժ գիծ» հեռախոսահամարներին զանգահարելու, դիմում-բողոքներ, հաղորդումներ ներկայացնելու համար: Միաժամանակ, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի 2019 թվականի հոկտեմբերի 2-ի N 5-Լ հրամանով սահմանվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց կողմից ուղարկվող դիմումների, բողոքների, առաջարկությունների ընդունման և հասցեատերերին խորհրդապահական կարգով փոստային առաքման կարգը, բացի այդ տեղադրվել են հատուկ արկղեր՝ քառալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն, պարսկերեն) գրառմամբ, որոնց օգնությամբ անազատության մեջ պահվող անձանց դիմումներն ու առաջարկություններն ուղարկվում են հասցեատերերին: Հաշվի առնելով կատարված միջազգային փորձի ուսումնասիրությունը, հաղորդում ներկայացրած անձին չթիրախավորելու անհրաժեշտությունը, ինչպես նաև արդեն իսկ գործարկված մեխանիզմները՝ խնդրո առարկա ռազմավարական կետից բխող լրացուցիչ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ըստ մշտադիտարկման խմբի, չնայած վերոնշյալ փաստարկների, նախագծի հիմնավորման մեջ բացակայում էր միջազգային լավագույն փորձի վերլուծությունը[7], մինչդեռ այդ ոլորտում գոյություն ունեն հստակ ստանդարտներ, որոնք ուղղված են այս համակարգի արդյունավետության բարձրացմանը, իսկ միջազգային փորձի առկայությունը սույն գործողության քանակական և որակական ցուցիչներից էր: Ներկայացված տեղեկատվությունը չի վկայում միջազգային փորձի համապարփակ ուսումնասիրության իրականացման մասին (օր.՝ ինչպես է ապահովվելու թեժ գծի միջոցով հաղորդում ներկայացրած անձի անանունությունը), իսկ ներդրված մեխանիզմները բավարար չափով չեն երաշխավորում հաղորդում ներկայացրած անձի անանունության ապահովումը, որը կկանխի նրա հնարավոր թիրախավորումը

Նման պարագայում գործողությունը չի կարող որակվել որպես մասնակի կատարված, քանի որ կատարված փոփոխությունները բավարար և ամբողջական չեն, ավելին՝ պարունակում են ռիսկեր և չեն նպաստում ռազմավարական նպատակի նվաճմանը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.2 ԶՈՒ-երում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի իրականացումը

[7] Տե՛ս նույն տեղում:

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ:	Ընդունվել են անանուն հաղորդումների ներկայացման իրավական հիմքերն ու ընթացակարգերն ամրագրող ենթաօրենսդրական ակտեր (կառավարության որոշում, նախարարի հրաման), որի հիմնավորման համար իրականացվել է ուսումնասիրություն՝ միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համահունչ: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ փաթեթներն ուղարկվել են ՀՀ Ազգային ժողով: Անանուն հաղորդում տալու ընթացակարգերը ներդրված են:	ՊՆ	Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է մասնակի:** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում, հարակից օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների փաթեթ չի մշակվել, քանի որ օրենսդարական փոփոխությունների անհրաժեշտությունը բացակայում է Կիրառվել են պրակտիկ միջոցներ:

Մշտադիտարկման խմբի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ որպես արդյունքային ցուցանիշ պետք է առկա լիներ համապատասխան իրավական ակտը: Անգամ այն պարագայում, երբ ՀՀ ԱՆ-ը և այլ կատարող/համակատարող մարմինները գտել են, որ բացակայում է իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն, այդ մասով անհրաժեշտ էր կատարել համապատասխան փոփոխություններ Ռազմավարության և Գործողությունների ծրագրի շրջանակներում: Հաշվի առնելով, որ Ռազմավարությամբ սահմանված գործողության ուղղությամբ որևէ աշխատանք չի իրականացվել, գործողությունը չի կարող գնահատվել որպես մասնակի կատարված: Այդ հիմքով մշտադիտարկման խումբը այն գնահատում է որպես չկատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.3. Հոգեբուժական հաստատություններում և տուն ինտերնատներում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ, ինչպես նաև մշակել արձանագրելու ձևաթուղթ և ուղեցույց ու սահմանել այդ ձևաթուղթն իրավապահ մարմիններին ներկայացնելու հստակ ընթացակարգ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ:	Ընդունվել են անանուն հաղորդումների ներկայացման իրավական հիմքերն ու ընթացակարգերն ամրագրող, ինչպես նաև խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արձանագրելու ձևաթուղթ և ուղեցույց ու սահմանել է այդ ձևաթուղթն իրավապահ մարմիններին ներկայացնելու հստակ ընթացակարգ ենթաօրենսդրական ակտեր (կառավարության որոշում, նախարարի հրաման): «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ	ԱՍՀՆ	Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ Առողջապահության նախարարություն	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

	օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ փաթեթներն ուղարկվել են ՀՀ Ազգային ժողով:			

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է մասնակի:** ԱՍՀՆ-ի կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ ԱՍՀՆ-ի «Բնակչության սոցիալական պաշտպանության տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի հաստատություններում շահառուների նկատմամբ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապտվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու, ինչպես նաև ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման ընթացակարգերը հաստատելու մասին» հրամանի նախագիծ:

ԱՍՀՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հրամանի նախագիծը ներկայացվել է 2 հավելվածով (հավելված 1՝ *«Բնակչության սոցիալական պաշտպանության տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի հաստատություններում շահառուների նկատմամբ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու ընթացակարգերը»*, հավելված 2՝ *«Բնակչության սոցիալական պաշտպանության տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի հաստատություններում շահառուների նկատմամբ ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման ընթացակարգերը»*): Նախագծերի վերաբերյալ ստացվել են կարծիքներ, որի արդյունքում որոշում է կայացվել երկրորդ հավելվածը չներառել հրամանի նախագծի մեջ: Նախագծում իրականացվել են նաև այլ փոփոխություններ:

Նաև հարկ է նշել, որ ըստ գործողության, հաշվետու ժամանակահատվածում անհրաժեշտ էր մշակել «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի և այլ հարակից օրենքների փոփոխությունների և լրացումների նախագիծը և այն ներկայացնել ՀՀ ԱԺ-ի հաստատմանը: ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է, սակայն գտնվում խմբագրման փուլում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.4. Կատարելագործել հոգեբուժական և խնամքի հաստատություններում շահառուի նկատմամբ ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման իրավական կարգավորումները՝ հստակեցնելով ուժի կիրառման հիմքերը, սահմանները, բոլոր հնարավոր իրավիճակները և եղանակները

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**

Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ:	Ընդունվել է հոգեբուժական և խնամքի հաստատություններում շահառուների նկատմամբ ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման ընթացակարգերի հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի հրաման, որի հիմնավորման համար իրականացվել է ուսումնասիրություն՝ միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համահունչ:	Առողջապահության նախարարություն	ԱՍՀՆ Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է կատարվել **է մասնակի:** Ներկայացված հաշվետվության մեջ նշված է, որ մշակվել է Առողջապահության նախարարի հրամանի նախագիծը, որը ներկայացվել է ԱՍՀՆ և ՄԻՊ գրասենյակի կարծիքի: Ստացված կարծիքները ստանալուց և ամփոփելուց հետո այն կներկայացվի ԱՆ՝ պետական փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ ՀՀ ԱՍՀ նախարարի հրամանի նախագիծը մշակվել է և գտնվում է ԱՆ-ում: Այն, սակայն, ինքնին իրավական բավարար հիմք չի կարող հանդիսանալ հարցի ամբողջական կարգավորման համար: Լիարժեք լուծման համար անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով լիազորող նորմի ամրագրում, որի հիման վրա հնարավոր կլինի ընդունել իրավական ուժ ունեցող ենթաօրենսդրական ակտ: Հրամանը կազմված է երկու հավելվածից, սակայն դրա երկրորդ մասը չունի համապատասխան իրավական հիմնավորում: Ըստ այդմ, որոշում է կայացվել անցում կատարել անհատական մոտեցման՝ կարգավորումները ներդնելով շուրջօրյա խնամքի հաստատությունների կանոնակարգերում՝ մինչև լիազորող նորմի ընդունումը: Տվյալ պահին թվայնացված եղանակով հայտ ներկայացնելու հնարավորություն առկա չէ:

Միևնույն ժամանակ, մշտադիտարկման խմբին չի տրամադրվել տեղեկատվություն այն մասին, թե որո՞նք են այն միջազգային չափանիշները և լավագույն փորձը, որոնք հիմք են հանդիսացել հրամանի նախագծի, այդ թվում ընթացակարգերի մշակման համար, ի՞նչ հիմնավորմամբ են ընտրվել այդ չափանիշները:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.5. Վերապատրաստել զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով: Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռի զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին զարգացնել և ամրապնդել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները վատ վերաբերմունքի արգելքի թեմայով միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների կիրառման վերաբերյալ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, ԶՈՒ-ում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհ50%-բաժեշտ գործիքակազմ:	Վերապատրաստվել է ԶՈՒ-ի հրամանատարական կազմի, ռազմական ոստիկանության ղեկավար և ոչ ղեկավար կազմերի 50%-ը: Վերապատրաստումներն իրականացվել են Միավորված ազգերի կազմակերպության և ԵԽ-ի միջազգային-իրավական չափանիշների հիման վրա՝ վերապատրաստումներն իրականացնելով առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն:	ՊՆ	Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական նպատակին ուղղված գործողությունները **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** ԶՈՒ հրամանատարական կազմի 50%-ը, ռազմական ոստիկանության հրամանատարական կազմի 50%-ը և ռազմական ոստիկանության անձնակազմի 50%-ը վերապատրաստվել է: ԵԽ երևանյան գրասենյակի հետ համատեղ կազմակերպվել են «Կյանքի իրավունք և վատ վերաբերմունքի արգելքի թեմայով երկօրյա դասընթացներ: «Կյանքի իրավունք» թեմայով պարբերաբար իրազեկման աշխատանքներ են տարվել զորամասերում:

ՖԽՔ-ի ընթացքում մշտադիտարկման խմբին հայտնի դարձավ, որ վերապատրաստվող անձանց ընտրությունը կատարվել է համապատասխան վարչությունների ղեկավարների

առաջարկությամբ: Վերապատրաստողները ընտրվել են միջազգային փորձագետների մասնակցությամբ:

Մշտադիտարկման արդյունքում նաև պարզ դարձավ, սույն գործողության քանակական ցուցանիշները ապահովված են (թիրախային խմբերի 50%-ը վերապատրաստվել են): Սակայն որակական ցուցանիշների մասով, որն է՝ վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն, տեղեկատվություն առկա չէ: ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ բացակայում են վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Կատարող մարմինների կողմից չեն ստուգվել ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ համադրել արդյունքները:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.6. Վերապատրաստել քրեակատարողական ծառայության ղեկավար և ոչ ղեկավար կազմի ծառայողներին, զինծառայողների նկատմամբ բռնության դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող զինվորական դատախազներին և վարույթ իրականացվնող քննիչներին ու դատավորներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով: Վերապատրաստումնե րի կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռի զարգացնել և ամրապնդել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները վատ վերաբերմունքի արգելքի թեմայով միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների կիրառման վերաբերյալ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝	Վերապատրաստվել է քրեակատարողական ծառայության ղեկավար և ոչ ղեկավար կազմի ծառայողների 50%-ը: Վերապատրաստվել է զինծառայողների մահվան դեպքեր քննող քննիչների, դատավորների, զինվորական դատախազների 50%-ը և վերապատրաստումներն իրականացվել են Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպայի խորհրդի միջազգային-իրավական	ԱՆ	Արդարադատության ակադեմիա Քննչական կոմիտե Գլխավոր դատախազություն Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ** Ռազմավարական նպատակին ուղղված գործողությունները **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ:	չափանիշների հիման վրա՝ վերապատրաստումներն իրականացնելով առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն:		հանձնաժողով Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են քրեակատարողական ծառայության ղեկավար և ոչ ղեկավար կազմի 422 ծառայողների վերապատրաստումներ՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով: Նույն թեմայով վերապատրաստվել է 1 զինվորական դատախազ, 41 քննիչ և 27 դատավոր:

ՖԽՔ-ի ընթացքում մշտադիտարկման խմբին պարզ դարձավ, որ քրեակատարողական ծառայողների վերապատրաստման թիրախային ցուցանիշը ապահովված է: Գնահատում իրականացվել է հարցաշարերի միջոցով, սակայն սահմանված իմացության 80% աճի մասով տեղեկատվություն առկա չէր: Միևնույն ժամանակ, քրեակատարողական ծառայողների վերապատրաստումները իրականացվել են Արդարադատության նախարարի 2023 թվականի նոյեմբերի 13 N 667-Լ հրամանով[8] սահմանված կարգով, որով նախատեսված է վերապատրաստումների արդյունքների ամփոփման գործիքներ՝ հնարավորություն տալով ստուգել վերապատրաստումների արդյունավետությունն ու ազդեցությունը:
Ինչ վերաբերում է գործողության մյուս թիրախային խմբերին, որոնք են դատախազներն ու քննիչները, ապա նրանց վերապատրաստումների մասով Արդարադատության ակադեմիան հայտնել է, որ չունի անհրաժեշտ գործիքակազմ՝ պարտադրելու մասնակցությունը, ինչի հետևանքով մասնակցության մակարդակը ցածր է:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.8. Ամրապնդել ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների քննություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման կարողությունները

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի	Ուղղակի արդյունքային քանակական և	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք

[8] https://www.moj.am/legal/view/article/1728/

մակարդակում	որակական ցուցանիշներ (2024թ)			
Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ:	ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների քննություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման կազմն ընդլայնվել է:	Քննչական կոմիտե		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Հրապարակված հաշվետվության և ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ նախատեսված 8 հաստիքներն համալրվել են:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.9. Վերապատրաստել բուժաշխատողներին, այդ թվում՝ շտապ օգնություն ծառայության և հոգեբուժական հաստատությունների աշխատակիցներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռի զարգացնել և ամրապնդել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները վատ վերաբերմունքի արգելքի թեմայով միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների կիրառման վերաբերյալ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական	Վերապատրաստվել է բուժաշխատողների, այդ թվում՝ շտապ օգնություն ծառայության և հոգեբուժական հաստատությունների աշխատակիցների 50%-ը և վերապատրաստումներն իրականացվել են Միավորված ազգերի	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ վարչապետի աշխատակազմի միջազգային-իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ** Ռազմավարական նպատակին ուղղված գործողությունները **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ**

հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ:	կազմակերպության և Եվրոպայի խորհրդի միջազգային-իրավական չափանիշների հիման վրա՝ վերապատրաստումներն իրականացնելով առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածներ ը ցուցաբերել են առնվազն 80% իմացություն:			**Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** ՀՀ-ում գործող 93 հոգեբույժներից 84-ը անցել են շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող կրեդիտավորման դասընթաց, որը կազմում է շուրջ 90%: Շտապ օգնության ծառայության բուժաշխատողների համար իրականացվել են շարունակակական մասնագիտական զարգացման կրեդիտավորված դասընթացներ, որոնց արդյունքում վերապատրաստվել է շտապ օգնության աշխատակիցների 2%-ը:

ՖԽՔ-ի ընթացքում մշտադիտարկման խմբին հայտնի դարձավ, որ վերապատրաստման աշխատանքները իրականացվել են Առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի կողմից: Սակայն վերապատրաստումների ազդեցության, արդյունքների գնահատման, ինչպես նաև մասնակիցների ընտրության չափանիշների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել:

ԱՆ-ի հրապարակած հաշվետվության մեջ անդրադարձ է արվում միայն հոգեբուժական հաստատությունների և շտապ օգնության ծառայությունների աշխատակիցների վերապատրաստումներին, մինչդեռ բուժհաստատությունների այլ բուժաշխատողների վերապատրաստման գործընթացների մասին որևէ տվյալ առկա չէ:

Այսպիսով, գործողության քանակական ցուցանիշը ապահովվել է մասնակի, այն է՝ հոգեբուժական հաստատության աշխատողների նախատեսված 50%-ը վերապատրաստվել են, իսկ բուժաշխատողների, այդ թվում՝ շտապ օգնություն ծառայության աշխատակիցների վերապատրաստման ցուցանիշը նախատեսված չափով չի իրականացվել: Չնայած քանակական ցուցանիշի կատարմանը, որակական ցուցանիշներն ամբողջությամբ ապահովված չեն, քանի որ բացակայում են ապացույցներ, որ վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.10. Բարելավել քրեակատարողական հիմնարկների, ինչպես նաև դատարաններում ազատությունից զրկված անձանց համար նախատեսված խցերի պայմանները

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ:	Վերանորոգվել է քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև դատարաններում ազատությունից զրկված անձանց համար նախատեսված՝ բարելավման կարիք ունեցող խցերի առնվազն 10%-ը:	ԱՆ	Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ Դատական դեպարտամենտ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Հաշվետվության ուսումնասիրության և և ՖԽՔ-ի արդյունքում պարզ դարձավ, որ ՀՀ դատարանների վարչական շենքերի կալանախցերի ավելի քան 6.8%-ը վերանորոգվել է: 2024 թ. ընթացքում ՔԿԾ-ի կողմից վերանորոգվել է ընդհանուր 45 խուց:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.11. Բարելավել ձերբակալված և կալանավորված անձանց (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց) արժանապատիվ տեղափոխման պայմանները

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը	Ներքին գործերի նախարարությունն ապահովվել է ազատությունից զրկված	ՆԳՆ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ:	անձանց (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց) տեղափոխման համար նախատեսված 22 տրանսպորտային միջոցներով: Ձեռք բերված տրանսպորտային միջոցների պայմանները (մատչելիություն) համապատասխանում է միջազգային չափանիշներին:			

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Հաշվետվության ուսումնասիրության և և ՖԽՔ-ի արդյունքում պարզ դարձավ, որ ձեռք է բերվել 22 տրանսպորտային միջոց, որից 1-ը նախատեսված է հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.12. Ընդունել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի բացարձակ իրականացումը քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում, հոգեբուժական հաստատություններում, ձերբակալվածներին և	Որոշակիացվել է «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների բովանդակությունը՝ ապահովելով դրանց մեկնաբանման և կիրառման հիմքերը:	ԱՆ	Վարչապետի աշխատակազմի միջազգային և իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**

կալանավորվածներին պահելու վայրերում, քրեական վարույթի ընթացքում՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստումներ և ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու կիրառելով անհրաժեշտ գործիքակազմ:			Արդարադատության ակադեմիա	

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Մշակվել են ուղեցույց ձեռնարկներ և դրանք ուղարկվել են Քննչական կոմիտե (ՔԿ) և Գլխավոր դատախազություն իրավական ակտի ուժով ընդունելու համար:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրված տեղեկատվության համաձայն՝ ՔԿ-ը ուղեցույց-ձեռնարկները փոխանցել է իր ստորաբաժանումներին: Սակայն դրանց գործնական կիրառման վերաբերյալ, ինչպես նաև առանձին ներքին իրավական ակտի մշակման և ներդրման մասին տեղեկատվություն չի ներկայացվել:

Հաշվի առնելով, որ Ռազմավարությամբ 2024 թվականի երկրորդ կիսամյակի համար նախատեսված էր ներքին իրավական ակտի ընդունում, որն այս պահին իրականացված չէ, մշտադիտարկման խումբը գործողությունը գնահատում է որպես մասնակի կատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՄՆԱԿԻ:**

«ԽՈՇՏԱՆԳՈՒՄԻՑ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ԿԱՄ ՊԱՏԺԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈԼՈՐՏ 2-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	11	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	4	36.36%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	5	45.45%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	2	18.18%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 3-ը համապատասխանում էին սահմանված հատկանիշներին, որի գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	3	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	3	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ՈԼՈՐՏ 3. ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.1. Օրենսդրորեն նախատեսել կատարողական վարույթների ձգձգման հետևանքով առաջացած վնասի փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց՝ ըստ «Ավակիմյան vs Հայաստան» ՄԻԵԴ որոշման պահանջների

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ	Օրենսդրական փաթեթը հաստատված է ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ Ազգային ժողով	ԱՆ	Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է**: Ըստ հաշվետվության և կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ «Կատարողական վարույթի մասին» օրենքն ընդունվել է ԱԺ-ի կողմից 2024 թվականի ապրիլի 11-ին և ուժի մեջ կմտնի 2025 թվականի հուլիսի 1-ից:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.2. Օրենսդրորեն նախատեսել ազատությունից զրկված անձանց բողոքների քննության առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ, որով ամրագրվել են ազատությունից զրկված անձանց բողոքների քննության առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ և միջոցներ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**

մակարդակում		մարմին		
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ	Օրենսդրորեն նախատեսված են այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կընձեռեն կանխարգելելու ենթադրյալ խախտման շարունակությունը, իսկ անհրաժեշտության դեպքում տրամադրել հասցված վնասի փոխհատուցում, ինչպես պահանջվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով:	ԱՆ	Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Ըստ հաշվետվության և կատարված ուսումնասիրությունների՝ մշակվել է «Քրեակատարողական օրենսգրքում» և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքներում լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթը, որը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ 2024 թվականի դեկտեմբերի 5-ին, վերադարձվել է, լրամշակվել է և կրկին ներկայացվել:

ԱՆ-հաշվետվության մեջ նշվում է, որ վերոնշյալ իրավական ակտերի նախագծերը մշակվել են 2.1 գործողության հետ համատեղ: Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ-ը որպես 3.2 գործողության կատարողական միջոց նախատեսել է նույն իրավական փոփոխությունների շրջանակը, որը կիրառվել է 2.1 գործողության ներքո, ուստի 3.2 գործողությունը բնութագրվում է նույն համակարգային բացթողումներով և խոցելիություններով, ինչպես 2.1 գործողությունը:

Հետևաբար, 3.2 գործողությունը նույնպես ենթարկվում է 2.1 գործողության համար բնորոշ գնահատականին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.5. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել արտոնություն՝պետական տուրքի վճարումից ազատելու ձևով, հայցվորներին բոլոր հիմնարար իրավունքի խախտման հետևանքով պատճառված վնասի, այդ թվում՝ ոչ նյութական (բարոյական) վնասի փոխհատուցման պահանջի հայցերով՝ ի ապահովումն անձի իրավունքի պաշտպանության արդյունավետության

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք

Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվել է կառավարության հաստատմանը	ԱՆ	ԲԴԽ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված:** Նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

Մշտադիտարկման արդյունքներով պարզ դարձավ, որ մշակվել է ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որը ներկայացվել է հանրային քննարկման: Քննարկման արդյունքների ամփոփումից հետո, այն 2024 թվականի նոյեմբերի 25-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, որտեղից ստացված դիտարկումների հիման վրա նախագծերը լրամշակվել են և կրկին ներկայացվել Վարչապետի աշխատակազմ, այնուհետև հաստատվել է Կառավարության նիստում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսել տվյալ քաղաքացու, նրա ընտանիքի անդամների իրավունքը՝ դիմելու հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վճիռը վերացնելու պահանջով

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու,	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը, որով նախատեսված է տվյալ քաղաքացու, նրա ընտանիքի անդամների իրավունքը՝ դիմելու հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման	ԱՆ	Առողջապահության նախարարություն ՏԿԵՆ ԲԴԽ Վարչապետի աշխատակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ	ենթարկելու վճիռը վերացնելու պահանջով		ազմի միջազգայի ն իրավական հարցերով ներկայացո ւցչի գրասենյակ ԱՍՀՆ	

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:**
Մշտադիտարկման արդյունքներով պարզ դարձավ, որ մշակվել է «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ, որը 2024 թվականի հոկտեմբերի 28-ին շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների միջև և ներկայացվել է հանրային քննարկման: Ստացված կարծիքները գտնվում են ամփոփման փուլում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.7. Հասարակական կազմակերպությունների համար սահմանել դատարան դիմելու իրավունք հանրային նշանակության, կարևորության հարցերով, այդ թվում՝ ինչպես վարչական, այնպես էլ քրեական վարույթներով՝ հաշվի առնելով actio popularis սկզբունքը

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը, որով ընդլայնված է ՀԿ-ների՝ հանրային նշանակության, կարևորության հարցերով, այդ թվում՝ ինչպես վարչական, այնպես էլ քրեական վարույթներով դատարան դիմելու իրավունքի շրջանակը՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ՝ հաշվի առնելով այն երկրների	ԱՆ	Շրջակա միջավայրի նախարարություն ԱՍՀՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**

	փորձը, որտեղ կիրառվում է actio popularis սկզբունքը:			

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված չէ:** 2024 թվականի ընթացքում պատգամավորական նախաձեռնությամբ մշակվել է ««Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ: Նախագիծը ԱՆ-ի դիտարկումների հիման վրա լրամշակվել է:

ՖԽՔ-ի ընթացում արձանագրվեց, որ Նախագիծը ԱԺ-ի կողմից լրամշակվել է և լրամշակված տարբերակը ներկայացվել է հանրային քննարկման և ՀՀ կառավարությանը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.8. Ներդնել «դատավորի ընկեր» (amicus curie) հասկացության մեխանիզմներն ու կանոնակարգերը ներպետական իրավական համակարգում, որը կաջակցի դատարանին՝ տրամադրելով տեղեկատվություն կամ խորհրդատվություն իրավունքի կամ այլ հարակից հարցերի վերաբերյալ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ	Մշակված են համապատասխան օրենսդրական փոփոխությունները և հաստատվել են Կառավարության կողմից Օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացնել Ազգային ժողովի ընդունմանը	ԱՆ	ԲԴԽ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Ըստ նույն աղբյուրի՝ «ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակվել և ներկայացվել են հանրային քննարկման 2024 թվականի հոկտեմբերի 31-ին:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ ԵԽ-ի կողմից ստացվել է կարծիք նախագծի վերաբերյալ։ Միևնույն ժամանակ, պարզ դարձավ, որ ԱՆ-ում քննարկվում է ինստիտուտի թե՛ ներդրման, թե՛ կարգավորումների շրջանակի հարցը և այս մասով նախագիծը լրամշակվում է։

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ։**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.9. Կատարելագործել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համակարգը, որով կնախատեսվի. 1. Մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ 1. Նախատեսելով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը յուրաքանչյուր դեպքում, ներառյալ՝ երկու բացասական զեկույցների պայմաններում, դատարանի կողմից քննարկելու պահանջ 2. Բացառել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցի քննարկման և վերանայման համար տարբերակված նախապայմանների և չափանիշների սահմանումը. 3. Սահմանել դատարանի կողմից դատապարտյալի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցի քննարկման և մերժման դեպքում նոր քննարկման համար հավասար ժամկետներ. 4. Քրեակատարողական ծառայության կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու վերաբերյալ զեկույցի կազմման բալային համակարգում բացառել Քրեակատարողական հիմնարկներում անհրաժեշտ պայմանների կամ հնարավորությունների բացակայությունը (օրինակ՝ աշխատանք, վերասոցիալականացմա ն ծրագրեր և այլն) ի վնաս ազատությունից զրկված անձի կիրառումը. 5. Քրեակատարողական ծառայության կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու վերաբերյալ զեկույցի կազմման բալային համակարգում բացառել տարիքի հիմքով անհիմն տարբերակված մոտեցումը

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ	Մշակված օրենսդրական փոփոխությունների նախագծով բարելավված է պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համակարգը։ Օրենսդրական փոփոխությունների նախագիծը ներառում է թվարկված բոլոր կարգավորումները։	ԱՆ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Ըստ նույն աղբյուրի՝ մշակվել են միայն հայեցակարգի և արդարադատության նախարարի հրամանների նախագծեր:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ մշակված հայեցակարգի և նախարարի հրամանների նախագծերը գործողությունների ծրագրով որպես ուղղակի արդյունաքային քանակական և որակական ցուցանիշ նախատեսված չեն: Իսկ գործողության ներքո նախատեսված հիմնական օրենսդրական փաթեթները՝ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի և այլ հարակից օրենքների փոփոխությունները, դիտարկվող ժամանակահատվածում դեռևս մշակման փուլում էին:

Մշտադիտարկման խումբը արձանագրում է, որ գործողության իրականացման ընթացքը զգալիորեն հետ է մնում ռազմավարությամբ նախանշված ժամկետներից: Առկա են էական ձգձգումներ ինչպես մշակման, այնպես էլ ընդունման փուլերում, ինչը ոչ միայն խոչընդոտում է ծրագրային նպատակների իրագործմանը, այլև նպաստում է ռազմավարական գործընթացների ոչ լիարժեք և ոչ արդյունավետ իրականացմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ արդյունքային ցուցանիշների ապահովման ուղղությամբ ձեռնարկված քայլերը այս փուլում մնում են սահմանափակ և անբավարար՝ չհասնելով ռազմավարությամբ սահմանված թիրախային արդյունքների, մշտադիտարկման խումբը գործողության կատարումը գնահատում է որպես չկատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.10. Ի կատարումն Դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 10-րդ կետի՝ ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիր և վերահսկողություն սահմանել իրագործման նկատմամբ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի	Ապանձնավորման ծրագրի տեխնիկական բնութագիրը մշակված է	ԲԴԽ	ԱՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ				

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Ըստ նույն աղբյուրի՝ մշակվել է ապանձնավորման ծրագրի տեխնիկական բնութագիրը:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ ԲԴԽ-ի կողմից ապանձնավորման կարգն առկա է, իսկ ներդրման աշխատանքները ընթացիկ փուլում են: Միաժամանակ, ըստ ներկայացված պարզաբանումների, գործողության կատարումը հետաձգվել է տեխնիկական բնույթի խնդիրների պատճառով:

Մշտադիտարկման խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ըստ նախանշված ժամանակացույցի՝ ծրագրի ներդրմանն ուղղված աշխատանքները նախատեսված էր մեկնարկել 2024 թվականի երկրորդ կիսամյակում: Սակայն ներկա դրությամբ ծրագրի ներդրման գործընթացը դեռևս չի իրականացվել, ինչը փաստում է գործողության ժամկետային ետ մնալու մասին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.11. Արդարադատության ակադեմիայում դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում մշակել և ներդնել զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող առանձին և համապարփակ վերապարաստման ծրագրեր

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ	Վերապատրաստման ծրագիրը մշակված է միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ և ներդրված է Արդարադատության ակադեմիայի ուսուցման տարեկան ծրագրում: Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց առնվազն 60%-ը վերապատրաստվել է նոր ծրագրով	Արդարադատության ակադեմիա	ԱՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը **գնահատվել է կատարված է:** Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց առնվազն 60%-ը վերապատրաստվել է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների թեմայով:

Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ դատավորների և դատավորների թեկնածուների մասով վերապատրաստումների քանակական ցուցանիշները կատարվել են (վերապատրաստվել են 60%-ը), սակայն բացակայում է դրանց որակական գնահատումը, մասնավորապես՝ առկա չեն տեղեկություններ վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման մասին:

Այսպիսով, բացակայում են վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Կատարող մարմինների կողմից չեն ստուգվել ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ համադրել արդյունքները:

Ուստի, չնայած այն հանգամանքին, որ քանակական առումով գործողությունը կատարվել է՝ գործողության արդյունքային բաղադրիչի և ռազմավարական նպատակների հետ դրա փոխկապակցության մասին որևէ վերլուծություն այս փուլում առկա չէ: Առանց համակարգված գնահատման գործընթացների՝ վերապատրաստման խորքային արդյունավետությունը մնում է անորոշ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.12. Վերանայել անգործունակ ճանաչված անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքին առնչվող կարգավորումները՝ բացառելով իրենց իրավունքներին և շահերին առնչվող այլ խնդիրներով դատարան դիմելու կամ լսված լինելու իրավունքի անհամաչափ սահմանափակումները

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը	ԱՆ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

ու տենխիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբԱպահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տենխիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ				

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Ըստ նույն աղբյուրի՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը մշակվել է, շրջանառվել է, սակայն չի ներկայացվել կառավարության հաստատմանը:

ՖԽՔ-ի ընթացքում նշվել է, որ գործողության կատարման ուշացումը պայմանավորված է իրականացվող աշխատանքների ծավալով: Ըստ ներկայացված տեղեկության՝ իրականացվել են միջազգային փորձի ուսումնասիրություններ, ինչպես նաև իրականացվել են օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված նախատեսվող փոփոխությունների հիմնավորմանը: Ներկայումս այդ փոփոխությունները գտնվում են վերջնականացման փուլում և ըստ տրամադրված տեղեկատվության, նախատեսվում է առաջիկայում ներկայացնել դրանք կառավարության հաստատմանը:

Չնայած այն հանգամանքին, որ որոշակի առաջընթաց արձանագրվել է, այդ թվում՝ ոլորտային վերլուծությունների և նախագծերի մշակման ուղղությամբ, գործողության հիմնական նպատակներից մեկը՝ օրենսդրական փոփոխությունների նախագիծը կառավարության հաստատմանը ներկայացնելը չի կատարվել: Այդ հանգամանքը էական նշանակություն ունի գործողության ամբողջական իրագործման և դրանից բխող ռազմավարական արդյունքների իրացման համար:

Ուստի, հաշվի առնելով գործողության փաստացի ընթացքը, ժամկետային ուշացումները և այն, որ գործընթացը դեռևս չի հասել իր ամբողջական ավարտին՝ մշտադիտարկման խումբը գործողությունը գնահատում է որպես մասնակի կատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.13. Ընդլայնել դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվող անձանց ցանկը՝ նախատեսելով պետական տուրքի վճարումից ազատում՝ հաշմանդամության խումբ սահմանելու կամ հաշմանդամության խումբը վերականգնելու պահանջով դատարան հայցադիմում ներկայացնելու, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու գործերով

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տեխնիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը	ԱՆ	ԲԴԽ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Ըստ ներկայացված տեղեկատվության՝ գործողության շրջանակում մշակվել է օրենսդրական նախագծերի փաթեթ, որն ուղարկվել է շահագրգիռ պետական մարմիններին՝ քննարկման նպատակով, ինչպես նաև հանրային քննարկման է ներկայացվել e-draft.am հարթակում: Ստացված դիտարկումներն ու առաջարկները ամփոփվել են, և արդյունքում ձևավորված փաթեթը 2024 թվականի նոյեմբերի 25-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.14. Վերանայել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը՝ սահմանելով հստակ և օբյեկտիվ չափանիշներ մասնավոր սեփականությունը բացառիկ հանրային շահ ճանաչելու համար. նախատեսելով պահանջ և հիմքեր որոշումների ընդունման, այդ թվում՝ հանրային շահի բացառիկությունը գնահատելու, գործընթացների վաղ փուլերում սեփականատերերի, ինչպես նաև՝ կենսագործունեության միջավայրի փոփոխության առումով շահագրգիռ հասարակության ներկայացուցիչների մասնակցության համար. նախատեսելով բացառիկ՝ գերակա հանրային շահի անվան տակ օտարվող գույքի ձեռքբերողների նախկին գործունեության ստուգում (due diligence) և դրա թափանցիկության ապահովում. ապահովելով ձեռքբերողների կողմից պետությանը ներկայացվող ֆինանսական երաշխիքների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը. երաշխավորելով պետության հանդես գալը որպես կողմ և պատասխանատվությա ն ստանձնումը՝ ձեռքբերողների պարտականությունների պատշաճ կատարման ապահովման և քաղաքացիների իրավունքների պաշտպանության նպատակով

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել գործի արդար քննությանը նպաստող պայմանների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ փոխհատուցումների արդյունավետ մեխանիզմի, բողոքներ ներկայացնելու, actio popularis սկզբունքը կիրառելու, «դատավորի ընկեր» (amicus curie) սկզբունքը ներդնելու, պետական տուրքի վերանայման, օրենսդրական ու տենխիկական բնույթի այլ նախապայմանների ստեղծմամբ	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը:	ԱՆ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Ըստ նույն աղբյուրի՝ նախագծերի փաթեթի մշակման աշխատանքները մեկնարկել են և 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հնարավոր կլինի այն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ:

Չնայած գործընթացի մեկնարկին և պատասխանատու մարմնի կողմից որոշակի քայլերի իրականացմանը, գործողության հիմնական նպատակային արդյունքը՝ նախագծերի փաթեթի ներկայացումը Վարչապետի աշխատակազմ, նախատեսված էր իրականացնել մինչև 2024 թվականի ավարտը: Ժամկետային այս ուշացումը նշանակում է, որ գործողությունն էականորեն հետ է մնում նախանշված ժամանակացույցից:

Հաշվի առնելով գործողության փաստացի ընթացքը, ժամկետային չկատարման հանգամանքը և այն, որ գործընթացը դեռևս գտնվում է նախնական փուլում և հեռու է իր վերջնական

նպատակային արդյունքից՝ մշտադիտարկման խումբը գնահատում է գործողությունը որպես **մասնակի կատարված**։

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ։**

«ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈԼՈՐՏ 3-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	12	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	4	33.33%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	5	41.67%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	3	25.00%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 1-ը համապատասխանում էր սահմանված հատկանիշներին, որի գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ՈԼՈՐՏ 4. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ապահովել իրավահավասարության և խտրականության արգելքի կիրառումը՝ համապատասխան օրենսդրական նախապայմաններ ստեղծելու, դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստելու, իրազեկվածությունը բարձրացնելու, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն սահմանելու, ինչպես նաև իրավահավասարության և խտրականության արգելքի ամրապնդմանն ուղղված օժանդակ այլ գործողություններ իրականացնելու միջոցով

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.1. «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքում սահմանել խտրականության հասկացությունը, տեսակները, դրանից պաշտպանության միջոցները և մեխանիզմները, իրավահավասարության հարցերով զբաղվող մարմնի կազմավորման/ գործող մարմիններից որևէ մեկի կազմում կառույցի ստեղծման, գործունեության երաշխիքները՝ միջազգային չափանիշներին համապատասխան Իրավահավասարության խորհուրդը ներկայացնում է խորհրդատվական եզրակացություն, առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության սահմանադրական և վճռաբեկ դատարաններին՝ վերջիններիս կողմից հարցման հիման վրա, խտրականության վերաբերյալ գործերով օժանդակ դիրքորոշում (amicus curiae) ներկայացնելու վերաբերյալ, նպաստում է իրազեկվածության բարձրացմանը և այլն

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել իրավահավասարության և խտրականության արգելքի կիրառումը՝ համապատասխան օրենսդրական նախապայմաններ ստեղծելու, դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստելու, իրազեկվածությունը բարձրացնելու, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն սահմանելու, ինչպես նաև իրավահավասարության և խտրականության արգելքի ամրապնդմանն ուղղված օժանդակ այլ գործողություններ իրականացնելու միջոցով:	Լրամշակված օրենքի նախագիծը համահունչ է միջազգային լավագույն փորձին և չափանիշներին և այդ նախագծով սահմանված է խտրականության հասկացությունը, տեսակները, դրանից պաշտպանության միջոցները և մեխանիզմները, իրավահավասարության հարցերով զբաղվող մարմնի կազմավորման, գործունեության կարգը: Լրամշակված օրենքի նախագիծը հաստատված է ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ Ազգային ժողովի ընդունմանը:	ԱՆ	ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից

պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և հարակից այլ օրենքների նախագծերի փաթեթը 2024 թվականի հուլիսի 31-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, վերադարձվել է: Վարչապետի աշխատակազմի նկատառումներն ամփոփման փուլում են, որից հետո կներկայացվի կառավարության հաստատմանը:

ՖԽՔ-ի ընթացքում ևս արձանագրվեց, որ ներկայումս Վարչապետի աշխատակազմի դիտարկումների հիման վրա կատարվում են փոփոխություններ նախագծում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.2. Դատավորների, քննիչների, դատախազների և ոստիկանների (համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները) համար շարունակել իրականացնել վերապատրաստումներ խտրականության արգելքի, իրավահավասարության ապահովման թեմաներով: Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռեն շարունակաբար կատարելագործել գիտելիքները, հմտություններն ու կարողությունները իրավահավասարության ապահովման, խտրականության արգելքի թեմաներով միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և միջոցների վերաբերյալ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Աշտադիտարկման արդյունք**
Ապահովել իրավահավասարության և խտրականության արգելքի կիրառումը՝ համապատասխան օրենսդրական նախապայմաններ ստեղծելու, դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստելու, իրազեկվածությունը բարձրացնելու, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն սահմանելու, ինչպես նաև իրավահավասարության և խտրականության արգելքի ամրապնդմանն ուղղված օժանդակ այլ գործողություններ իրականացնելու միջոցով:	Վերապատրաստման ուսումնական նյութերը վերանայված, լրամշակված են և համահունչ են միջազգային լավագույն չափանիշներին և փորձին՝ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի և ՄԱԿ-ի սկզբունքներն ու չափանիշները՝ վերապատրաստումներն իրականացնելով առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն: 2024թ. ավատին վերապատրաստված դատավորների, դատախազների, քննիչների և ոստիկանների թվի աճ	Արդարադատության ակադեմիա ՆԳՆ	ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

	առնվազն 60%-ով՝ ի համեմատություն ելակետային տվյալների։			

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է։** Ըստ նույն աղբյուրի՝ խտրականության արգելքի և իրավահավասարության ապահովան թեմաներով վերապատրաստված դատավորների, դատախազների և քննիչների թիվն աճել է 60%-ով։ Մշտադիտարկման արդյունքների համաձայն՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության թվով 530 ծառայող վերապատրաստվել է, որը ապահովում է ավելի քան վերապատրաստված ոստիկանների 60% աճ՝ ի համեմատություն ելակետային տվյալի։

Այս ցուցանիշը փաստում է գործողության քանակական բաղադրիչի էական առաջընթացը, ինչը թույլ է տալիս արձանագրել, որ գործողության **քանակական իրականացումը կատարված է**։

Համաձայն հաշվետվության՝ ոստիկանության ծառայողները վերապատրաստման ավարտին անցել են գիտելիքի ստուգում՝ ստուգարքների, դիֆերենցված ստուգարքների և քննությունների ձևով, ինչի արդյունքներով վերապատրաստում անցած ծառայողները գրանցել են 80% և ավելի աճ։

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվել է, որ դատավորների, դատախազների և քննիչների վերապատրաստումների ազդեցության և արդյունքների գնահատման մեխանիզմներ չեն սահմանվել։ Չի իրականացվել մասնակիցների գիտելիքների նախնական կամ ամփոփիչ ստուգում, ինչպես նաև բացակայում է հստակ մեթոդաբանական մոտեցում՝ վերապատրաստումների ազդեցության և արդյունավետության գնահատման ուղղությամբ։

Սա նշանակում է, որ չնայած քանակական ցուցանիշների ապահովմանը, գործողության **որակական բաղադրիչը մնում է խոցելի և անբավարար**։ Առանց հստակ կառուցված մեխանիզմների հնարավոր չէ պարզել՝ արդյոք վերապատրաստումներն իրականում նպաստել են ռազմավարական նպատակի նվաճմանը, խտրականության կանխարգելման գործնական կարողությունների զարգացմանը կամ որևէ տեսանելի համակարգային բարեփոխման։

Արդյունքում՝ գործողության քանակական ցուցանիշները ապահովված են, սակայն բովանդակային և որակական բաղադրիչը բավարար չէ։

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է։**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ։**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.3. Բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների համար շարունակել իրականացնել վերապատրաստումներ խտրականության արգելքի, իրավահավասարության ապահովման թեմաներով: Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռեն շարունակաբար կատարելագործել գիտելիքները, հմտություններն ու կարողությունները իրավահավասարության ապահովման, խտրականության արգելքի թեմաներով միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և միջոցների վերաբերյալ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել իրավահավասարության և խտրականության արգելքի կիրառումը՝ համապատասխան օրենսդրական նախապայմաններ ստեղծելու, դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստելու, իրազեկվածությունը բարձրացնելու, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն սահմանելու, ինչպես նաև իրավահավասարության և խտրականության արգելքի ամրապնդմանն ուղղված օժանդակ այլ գործողություններ իրականացնելու միջոցով:	Վերապատրաստման ուսումնական նյութերը վերանայված, լրամշակված են և համահունչ են միջազգային լավագույն չափանիշներին և փորձին՝ վերապատրաստումներն իրականացնելով առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն: 2024թ. ավարտին վերապատրաստված բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների թվի աճ առնվազն 60%-ով՝ ի համեմատություն ելակետային տվյալների	Առողջապահության նախարարություն ԿԳՄՄՆ ԱՍՀՆ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Վերապատրաստված կրթական ոլորտի աշխատողների և սոցիալական աշխատողների թիվը աճել է 60%-ով, իսկ բուժաշխատողներինը՝ 18%-ով:

ՖԽՔ-ի ընթացքում ձեռք բերված տեղեկատվության համաձայն գնահատումը իրականացվել է Առողջապահության նախարարության Ազգային ինստիտուտի կողմից: ԱՍՀՆ-ին արդյունքները բավարարել են:

Միևնույն ժամանակ, մշտադիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ թեև սույն գործողության քանակական ցուցանիշները մասնակի ապահովված են (վերապատրաստված կրթական ոլորտի աշխատողների և սոցիալական աշխատողների թիվը աճել է 60%-ով, իսկ բուժաշխատողներինը՝ 18%-ով), սակայն որակական ցուցանիշների մասով, որն է՝ վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն, տեղեկատվություն առկա չէ: ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ բացակայում են վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Կատարող մարմինների կողմից չեն ստուգվել ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ համադրել արդյունքները:

Վերոնշյալ դիտարկման հետ կապված ԿԳՄՄՆ-ն հայտնել է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների հերթական վերապատրաստման և ատեստավորման գործընթացը 2024 թվականից իրականացվում է ուսուցչի մասնագիտական կարիքի գնահատման արդյունքների հիման վրա: Ուսուցչի կողմից վերապատրաստման ընթացքում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների և կարողությունների կիրառության նպատակով իրականացվում է վերապատրաստված ուսուցիչների աշխատանքի մշտադիտարկում: Սակայն, հաշվի առնելով, որ ուսուցիչը մասնակցում է վերապատրաստմանը մասնագիտական կարիքի գնահատման արդյունքում ձևավորված շրջափուլի ընթացքում, հետևաբար, վերապատրաստումների արդյունավետության չափման, ելակետային տվյալների և համադրման արդյունքները տեսանելի կլինեն համապատասխան շրջափուլերի ավարտից հետո: Վերապատրաստման գործընթացի ավարտից հետո իրականացվում է վերապատրաստվողների գիտելիքների և հմտությունների գնահատում՝ յուրաքանչյուր ուսուցչի համար սահմանված շրջափուլի ավարտին, վերապատրաստման բոլոր բաժինները ներառող մեկ ընդհանուր քննության միջոցով:

Որակական գնահատման ցուցիչները և ընթացակարգային այլ մեխանիզմներ այս պահին քննարկման և նախագծային փուլում են, որոնք հստակեցվելուց հետո կամրագրվեն համապատասխան իրավական ակտերում:

Հաշվի առնելով, որ քանակական տեսանկյունից գործողությունները կատարվել են մասնակի և մասնակի կատարված գործողությունների որակական գնահատման ցուցիչները դեռևս նախագծային փուլում են, գործողությունը գնահատվել է մասնակի և ոչ ամբողջական:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.4. Շարունակել բարձրացնել իրավահավասարության, բոլոր հիմքերով խտրականության արգելքի վերաբերյալ իրազեկվածությունը հանրության շրջանում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք

Ապահովել իրավահավասարության և խտրականության արգելքի կիրառումը՝ համապատասխան օրենսդրական նախապայմաններ ստեղծելու, դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստելու, իրազեկվածությունը բարձրացնելու, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն սահմանելու, ինչպես նաև իրավահավասարության և խտրականության արգելքի ամրապնդմանն ուղղված օժանդակ այլ գործողություններ իրականացնելու միջոցով:	Մշակված և տարածված տեսաձայնագրություններն ու տեղեկատվական նյութերը համահունչ են խտրականության արգելքի վերաբերյալ միջազգային իրավակարգավորումների ն: 2024թ. ավարտին ԶԼՄ-ների և սոցիալական ցանցերի միջոցով մշակված և տարածված են առնվազն 4 տեսաձայնագրություններ, տեղեկատվական նյութեր:	ԱՆ	ՄԻՊ Հանրային հեռարձակողի խորհուրդ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Մշակվել է խտրականության արգելքի թեմայով երկու տեսաձայնագրություն և տարածվել սոցիալական ցանցերի միջոցով:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ մշակվել են երեք տեսանյութ, որից վերջինը հրապարակվել է 2025 թվականի մայիսի 13-ին[9], իսկ մյուս նյութերը դեռևս մշակվում են: Տեսանյութերի տարածումն իրականացվել է բացառապես ԱՆ-ի պաշտոնական կայքէջի միջոցով: Դիտարկվող ժամանակահատվածում (նաև մշտադիտարկման դաշտային աշխատանքների ժամանակահատվածում) տեղեկատվական նյութերը չեն ուղարկվել ԶԼՄ-ներին, իսկ թիրախային լսարանների հասանելիության, տեղեկացվածության մակարդակի և ազդեցության գնահատում չի իրականացվել:

Քանակական և բովանդակային առումով գործողությունը իրականացվել է մասնակի, իսկ ազդեցության չափման բացակայությունը խոչընդոտում է ռազմավարությամբ նախատեսված արդյունքների և նպատակների գնահատման հնարավորությանը: Բացի այդ, տեղեկատվության տարածման սահմանափակվածությունն էապես նվազեցնում է հանրության լայն շերտերի տեղեկացվածության ապահովման հնարավորությունը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

[9] https://www.youtube.com/watch?v=E49cVM_2Ooc&t=9s (17.06.2025թ. դրությամբ նյութն ուներ 57 դիտում)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.5. Ատելության խոսքի առավել մեղմ դրսևորումների համար սահմանել վարչական կամ քաղաքացիական. պատասխանատվության միջոցներ:

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել իրավահավասարության և խտրականության արգելքի կիրառումը՝ համապատասխան օրենսդրական նախապայմաններ ստեղծելու, դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստելու, իրազեկվածությունը բարձրացնելու, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն սահմանելու, ինչպես նաև իրավահավասարության և խտրականության արգելքի ամրապնդմանն ուղղված օժանդակ այլ գործողություններ իրականացնելու միջոցով:	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը, որով ատելության խոսքի առավել մեղմ դրսևորումների համար սահմանված են վարչական կամ քաղաքացիական պատասխանատվության միջոցներ:	ԱՆ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների միջև:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.6. Շարունակել իրականացնել իրազեկման արշավներ, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի ներգրավմամբ՝ ուղղված ատելության խոսքի, դրա բացասական ազդեցության բացառմանը, այլակարծության և կարծիքի ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի խթանմանը:

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել իրավահավասարության և խտրականության արգելքի	Իրազեկման արշավների տեղեկատվական նյութերը և տեսաձայնագրությունները	ԱՆ	ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**

կիրառումը՝ համապատասխան օրենսդրական նախապայմաններ ստեղծելու, դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստելու, իրազեկվածությունը բարձրացնելու, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն սահմանելու, ինչպես նաև իրավահավասարության և խտրականության արգելքի ամրապնդմանն ուղղված օժանդակ այլ գործողություններ իրականացնելու միջոցով:	մշակված են միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ և ուղղված են ատելության խոսքի, դրա բացասական ազդեցության բացառմանը, այլակարծության և կարծիքի ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի խթանմանը: 2024թ. ավարտին մշակված և տարածված են առնվազն 4 իրազեկման արշավներ:		Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Մշակվել են ատելության խոսքի, դրա դրսևորումների վերաբերյալ 2 տեղեկատվական պաստառ:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ այլ պաստառների մշակման աշխատանքները ԱՆ-ի կողմից դեռևս ընթացքի մեջ են, և ըստ տրամադրված տեղեկատվության՝ դրանք դեռևս չեն տարածվել:

Սույն գործողության ներքո նախատեսված էր մշակել և ԶԼՄ-ների ու սոցիալական ցանցերի միջոցով տարածել առնվազն 4 իրազեկման արշավ/ակցիա: Հարկ է նշել, որ երկու պաստառի զուտ մշակումը չի կարող դիտարկվել որպես իրազեկման արշավ: Իրազեկման արշավը իր բնույթով ներկայացնում է համակարգված, նպատակաուղղված հաղորդակցական գործընթաց, որը ներառում է կոնկրետ թիրախային խմբերի սահմանում, բազմակողմանի հաղորդակցական ռազմավարություն, տարբեր մեդիա հարթակներում համակարգված ներկայացում, ժամանակային շրջանակ և հստակ հաղորդակցական նպատակներ, ազդեցության չափման մեխանիզմներ և այլն:

Այսպիսով, գործողությունը չի բավարարում քանակական նվազագույն պահանջները: Ավելին, ԶԼՄ-ների և սոցիալական ցանցերում նյութերի չհրապարակվածությունը նշանակում է, որ նույնիսկ մշակված երկու պաստառները չեն կատարում իրենց հիմնական գործառույթը՝ հանրության տեղեկացվածության բարձրացումը: Միայն սահմանափակ թվով տեղեկատվական նյութերի մշակումը, առանց դրանց արդյունավետ տարածման և հասանելիության ապահովման, չի կարող ապահովել ռազմավարությամբ նախատեսված տեղեկացվածության բարձրացման նպատակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, մշտադիտարկման խումբը գործողությունը քանակական առումով գնահատում է որպես չկատարված: Որակական առումով գործողությունը նույնպես գնահատվում է որպես չիրականացված, քանի որ բացակայում են ռազմավարական խնդրի լուծման

ուղղությամբ էական արդյունքներ և չկան փաստեր, որոնք կվկայեն սպասվող վերջնական կամ միջանկյալ ազդեցության իրականացումը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.7. Ոստիկանության, քննչական մարմինների, դատախազության համար, մշակել և հաստատել խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության շարժառիթով գործերի քննության ուղեցույցներ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել իրավահավասարության և խտրականության արգելքի կիրառումը՝ համապատասխան օրենսդրական նախապայմաններ ստեղծելու, դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստելու, իրազեկվածությունը բարձրացնելու, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն սահմանելու, ինչպես նաև իրավահավասարության և խտրականության արգելքի ամրապնդմանն ուղղված օժանդակ այլ գործողություններ իրականացնելու միջոցով:	Ուղեցույցները մշակված են միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ, ինչպես նաև հաշվի առնելով գործնական խնդիրներն ու բացերը: Ուղեցույցները հաստատված են իրավական ակտի տեսքով:	ԱՆ ՆԳՆ Քննչական կոմիտե Գլխավոր դատախազություն	ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված:** Մշակվել են խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության շարժառիթով գործերի քննության վերաբերյալ ուղեցույցները, ներկայացվել են համապատասխան մարմիններին:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ ուղեցույցները հրապարակվել են և իրականացվել է կիրառողների համար երկօրյա վերապատրաստում:

Գործողության ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշը սահմանում էր, որ ուղեցույցները պետք է հաստատված լինեն իրավական ակտի տեսքով և ունենան պարտադիր

բնույթ նման գործեր քննող իրավապահ մարմինների աշխատակիցների համար: Սակայն, ներքին գործերի նախարարի համապատասխան հրամանը դեռևս գտնվում է մշակման փուլում, իսկ ՔԿ-ից հայտնեցին, որ նախագահի տեղակալի գրությամբ ուղեցույցները ՀՀ ՔԿ-ի ստորաբաժանումներին ուղարկվել է քննիչներին, դատախազներին և ոստիկանության ծառայողներին՝ ի գիտություն:

Այս պայմաններում, թեև բովանդակային առումով, գործողության հիմնական մասը իրականացվել է, սակայն առանց իրավական հիմքի ամրագրումների և լիարժեք ներգործող մեխանիզմների ներդրման հնարավոր չէ ապահովել ռազմավարությամբ նախատեսված արդյունքի լիարժեք իրագործումը:

Այսպիսով, ուղեցույցների հրապարակումն ու վերապատրաստումը կարևոր քայլեր են, սակայն դրանք չեն ապահովում գործողության ամբողջական կատարումը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ մշտադիտարկման խումբը գործողությունը գնահատում է որպես մասնակի կատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.8. Ստեղծել օրենսդրական երաշխիքներ ազգային փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար, որով ներպետական իրավական համակարգում կնախատեսվի ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող առանձին և համապարփակ օրենսդրություն

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել իրավահավասարության և խտրականության արգելքի կիրառումը՝ համապատասխան օրենսդրական նախապայմաններ ստեղծելու, դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստելու, իրազեկվածությունը բարձրացնելու, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն սահմանելու, ինչպես նաև իրավահավասարության և խտրականության արգելքի ամրապնդմանն ուղղված օժանդակ այլ գործողություններ իրականացնելու միջոցով:	Լրամշակված օրենքի նախագիծը համահունչ է միջազգային լավագույն փորձին և չափանիշներին: Լրամշակված օրենքի նախագիծը հաստատված է ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ Ազգային ժողով:	ԱՆ	ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 2024 թվականի հունիսին հաստատվել է Վենետիկի հանձնաժողովի և ԵԽ ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով տնօրինության համատեղ կարծիքը, որի հիման վրա «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը լրամշակվել է:

Մշտադիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ դիտարկվող ժամանակահատվածում նախագծի լրամշակված տարբերակը չի ներկայացվել կառավարության հաստատմանը և ԱԺ-ի ընդունմանը, ինչպես պահանջում էր գործողության ուղղակի արդյունքային որակական և քանակական ցուցանիշը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

«ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ» ՈԼՈՐՏ 4-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	8	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	6	75.0%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	2	25.0%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 4-ը համապատասխանում էին սահմանված հատկանիշներին, որի գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	4	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	3	75.0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	1	25.0%

ՈԼՈՐՏ 5. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.1. Երաշխավորել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամներին հոգեբանական անվճար օգնության շարունակական տրամադրումը և դրա հաշվառումը

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	Հոգեբանական անվճար օգնություն ստացող պատերազմից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների թվի պարբերական աճ 50%-ով՝ հիմք ընդունելով ելակետային տվյալները 2022թ. դեկտեմբերի դրությամբ:	ՆԳՆ	ՊՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված չէ:** Պատերազմից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամներին, հոգեբանական անվճար օգնություն ստացած անձանց հաշվառելու պարտավորությունը սահմանելու մասին ՀՀ

ՊՆ-ի հրամանը հաստատվել է, սակայն հաշվետու ժամանակահատվածում այն դեռևս ՆԳՆ չի ստացվել:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ հոգեբանական անվճար օգնություն ստացող պատերազմից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների թվի պարբերական աճ չի գրանցվել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ :**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.2. Երաշխավորել գերությունից վերադարձած անձանց/զինծառայողների ֆիզիկական և հոգեկան առողջական օգնության համակարգը՝ տրամադրելով անհատական, երկարաժամկետ և հետևողական աջակցություն

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	Գերությունից վերադարձած անձանց անհատական, երկարաժամկետ և հետևողական աջակցությունը շարունակաբար տրամադրված է՝ ըստ տարիների:	ՊՆ	Առողջապահության նախարարություն	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է** այն հիմնավորմամբ, որ 2024 թվականին գերությունից վերադարձված անձինք չեն եղել:

Մշտադիտարկման խմբի գնահատմամբ, գործողության ձևակերպումը («երաշխավորել համակարգը») ենթադրում է ակտիվ, նախապատրաստական մեխանիզմների ստեղծում, որոնք պետք է գործի անկախ նրանից՝ այդ պահին գերիներ կան, թե ոչ: «Երաշխավորել» բառը իրենից

ենթադրում է համակարգի ակտիվ գոյություն և պատրաստակամություն: Նույնիսկ գերիների բացակայության դեպքում անհրաժեշտ են կառուցել և զարգացնել կարողությունները, ներառյալ՝ մասնագիտացված կադրերի պատրաստում, ընթացակարգերի մշակում, բուժական և հոգեբանական ծառայությունների համակարգի ստեղծում, գործակցության մեխանիզմների հստակեցում և այլն: Ավելին, գերությունից վերադարձի իրադարձությունը կարող է տեղի ունենալ առանց նախազգուշացման: Համակարգի բացակայությունը ծանր հետևանքներ կարող է ունենալ վերադարձող անձանց համար:

Այս գործողության կատարման կարգավիճակը հակասում է բարեփոխումների տրամաբանությանը: Մասնավորապես, ՄԻՊ ռազմավարությունը նաև նախատեսված է կանխարգելիչ և կարողությունների կառուցման համար, ոչ թե միայն ռեակտիվ արձագանքի:

Հիշյալի հաշվառմամբ, անհրաժեշտ էր գործողությունը ոչ թե գնահատել որպես «կատարված, այն հիմնավորմամբ, որ գերիների վերադարձ տեղի չի ունեցել», այլ առնվազն ձեռնարկել համապատասխան նախապատրաստական գործողություններ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.3. Լրամշակել «Անհայտ կորած անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը և կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ վերաբերելի իրավական ակտերում, որով նախատեսվում է նախ անհայտ կորածի իրավական կարգավիճակի սահմանում, ինչպես նաև անկախ մասնագիտական կառույցի ստեղծում, որը պետք է զբաղվի անհայտ կորածի ճակատագրի և գտնվելու մասին տեղեկությունների ձեռքբերմամբ: Օրենքի նախագիծը ենթադրում է նաև անհայտ կորածի հարազատների հանդեպ պարտավորությունների ստանձնում և անհայտ կորելու հանգամանքների քննություն

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով	«Անհայտ կորած անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը հաստատված է ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ Ազգային ժողով, որի հիմնավորման համար իրականացվել է ուսումնասիրություն՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ, ինչպես նաև հաշվի առնելով 44-օրյա պատերազմի հետևանքով առաջացած հետևանքները:	ԱՆ	ՆԳՆ ԱՆ ԱԱԾ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:				

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված 2023 թվականի կատարողականի հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **չկատարված:** 2024 թվականի հաշվետվության մեջ սույն գործողությունը ներառված չէ, սակայն տրամադրվախ հավելյալ տեղեկատվությամբ պարզ դարձավ, որ նախագծի փաթեթը մշակվել է, սակայան ՀՀ կառավարության հաստատմանը և ընդունման նպատակով ԱԺ ներկայացնելու մասին տեղեկատվությունը բացակայում է:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.4. Իրականացնել հոգեկան առողջության վերապատրաստումներ սպա-հոգեբանների՝ շեշտադրելով գործնական խնդիրները: Զինված ուժերի մշտական բարոյահոգեբանական կայուն կարգավիճակը մշտապես ապահովելու համար անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել սպա հոգեբանների գիտելիքներն ու հմտությունները

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	Վերանայված և լրամշակված վերապատրաստման ծրագրերը համահունչ են առկա իրողություններին և թիրախավորում են գործնական խնդիրները: Վերապատրաստումներն իրականացվել միջազգային-իրավական չափանիշների հիման վրա՝ վերապատրաստումներն իրականացնելով առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: 2024թ. ավարտին վերապատրաստված սպա հոգեբանների աճ առնվազն 60%-ով՝ ի համեմատություն ելակետային տվյալների:	ՊՆ	Առողջապահության նախարարություն	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Ըստ նույն աղբյուրի՝ սպա հոգեբանները վերապատրաստվել են ամբողջ ծավալով՝ նախատեսված՝ 60%-ի փոխարեն:

Գործողությամբ բացակայում է կատարված միջոցառումների որակական ազդեցության ստուգման ցուցիչը:

Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ սպա հոգեբանների մասով վերապատրաստումների քանակական ցուցանիշները կատարվել են (վերապատրաստվել են ամբողջ ծավալով), սակայն բացակայում է դրանց որակական գնահատումը, մասնավորապես՝ առկա չեն տեղեկություններ վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման մասին:

Այսպիսով, բացակայում են վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Կատարող մարմինների կողմից չեն ստուգվել ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ համադրել արդյունքները:

Ուստի, չնայած այն հանգամանքին, որ քանակական առումով գործողությունը կատարվել է՝ գործողության արդյունքային որակական բաղադրիչի և ռազմավարական նպատակների հետ դրա փոխկապակցության մասին որևէ վերլուծություն այս փուլում առկա չէ: Առանց համակարգված գնահատման գործընթացների՝ վերապատրաստման խորքային արդյունավետությունը մնում է անորոշ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.5. Մշակել բժշկական գաղտնիքին վերաբերող տեղեկատվական ձեռնարկ բուժաշխատողների համար և հաստատել ենթաօրենսդրական իրավական ակտով

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության	Ցուցումները մշակված են միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ և հաստատված են իրավական ակտի տեսքով: 2024թ. ավարտին ցուցումները հասանելի են ՀՀ-ում գործող բուժհիմնարկների 50%-ում: Ցուցումները ներբեռնված են նաև ԱՐՄԵԴ համակարգում:	Առողջապահության նախարարություն		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:				

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Բժշկական գաղտնիքի պատշաճ մշակման մեթոդական ուղեցույցը մշակված է և հաստատված է Առողջապահության նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 7592-Լ հրամանով: Մեթոդական ուղեցույցը տեղադրվել է ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում և տարածվել որոշ մասնավոր հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների շրջանում[10]:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.6. Ապահովել պացիենտի՝ իր առողջական վիճակի վերաբերյալ տվյալների հասանելիությունը

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա	2024 թվականի համար արդյունքային ցուցիչ սահմանված չէ	Առողջապահության նախարարություն		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

[10] Ուղեցույցը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.moh.am/images/legal-1738.pdf

հնարավորությունների մասին: :				

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Գործիքը մատչելի է և հասանելի է ցանկացած քաղաքացու պորտալի և հավելվածի միջոցով: Ըստ նույն աղբյուրի՝ հավելվածը շարունակաբար կատարելագործվում է:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.7. Կազմակերպել և իրականացնել հանրային իրազեկման արշավներ վճարովի և անվճար բժշկական ծառայությունների և դեղերի մասին, ինչպես նաև առողջության համապարփակ ապահովագրության ներդրման վերաբերյալ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	Հանրային իրազեկման արշավների նյութերը և տեսաձայնագրությունները մշակված են	Առողջապահության նախարարություն	Հանրային հեռարձակողի խոչհուրդ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Սույն գործողության ներքո նախատեսված էր մշակել և ԶԼՄ-ների ու սոցիալական ցանցերի միջոցով տարածել առնվազն 4 հանրային իրազեկման արշավ/ակցիա:

Մշտադիտարկման ընթացքում գնահատելով կատարված գործողության որակական ազդեցությունը, պարզ դարձավ, որ բացակայում է տեղեկատվությունն այն մասին, թե ինչ տեսակի հարթակների (առցանց, տպագիր մամուլ, ռադիո, հեռուստատեսություն) և կոնկրետ որ ԶԼՄ-ների ու սոցիալական ցանցերի միջոցով են իրականացվել միջոցառումները: Բացի այդ, առկա չէ տեղեկատվություն դիտումների, մասնակիցների քանակի, լսարանի

ներգրավվածության աստիճանի վերաբերյալ, որը կօգներ գնահատել միջոցառումների ազդեցությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, մշտադիտարկման խումբը գործողությունը քանակական առումով գնահատում է որպես կատարված, սակայն այս միջոցառումների որակի, լսարանի, դրանց արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը հիմք չի տալիս եզրակացնելու, որ իրականացված միջոցառումներն ամբողջությամբ նպաստել են ռազմավարական նպատակի նվաճմանը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.8. Ստեղծել տեղեկատվական համակարգ կամ առկա համակարգում ապահովել պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, անվճար և համավճարային սկզբունքով մատուցվող բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությանը

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	Տեղեկատվական համակարգը (2024 թվականի համար՝ տեխնիկական բնութագիրը) մշակված է	Առողջապահության նախարարություն		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Մշակվել է տեղեկատվական համակարգի տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.9. Բարձրացնել հանրային իրազեկվածությունը պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին Իրազեկվածությունը նպատակ ունի պալիատիվ բժշկական օգնության վերաբերյալ բնակչության համար ապահովել ամբողջական և մատչելի տեղեկատվություն

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ))**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	Մշակված տեղեկատվական նյութերը և տեսաձայնագրությունները համահունչ են միջազգային լավագույն փորձին և չափանիշներին: 2024թ. ավարտին կազմակերպված և իրականացված են առնվազն 4 իրազեկման արշավներ հանրության շրջանում:	Առողջապահության նախարարություն	Հանրային հեռարձակողի խորհուրդ ԱՍՀՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Զանգվածային լրատվության, սոցիալական ցանցերի միջոցով կազմակերպվել և իրականացվել է պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին առնվազն 4 իրազեկման արշավ:

Սույն գործողության ներքո նախատեսված էր մշակել և ԶԼՄ-ների ու սոցիալական ցանցերի միջոցով տարածել առնվազն 4 իրազեկման արշավ/ակցիա:

ՖԽՔ-ի ընթացքում և հաշվետվության ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ իրազեկման նյութերը տեղադրվել են միայն Առողջապահության նախարարության պաշտոնական կայքի «Քո իրավունք» բաժնում և չեն տարածվել ԶԼՄ-ներում կամ այլ մեդիա հարթակներում: Այս մոտեցումը էական թերություն է, քանի որ նյութերի տեղադրումը միայն նախարարության կայքում չի ապահովում լայն հանրության հասանելիությունը և տեղեկացվածությունը: Իրազեկման արշավների արդյունավետությունը կախված է դրանց տարածման ծավալից և հասանելիությունից: Բացի այդ, իրական իրազեկման արշավը պահանջում է ակտիվ մեդիա ներգրավվածություն, սոցիալական ցանցերում նպատակաուղղված բովանդակության բաշխում և հանրային տարածքներում տեղեկատվական նյութերի ներկայացում: Չի իրականացվել արշավների ազդեցության գնահատում, ինչը բացառում է դրանց արդյունավետության որևէ օբյեկտիվ գնահատում: Պալիատիվ օգնության կարիք ունեցող անձինք և դրանց ծանոթները հաճախ չեն այցելում նախարարական կայքեր, ինչը նշանակում է, որ տեղեկատվությունը չի հասել իր նպատակային լսարանին:

Այսպիսով, չնայած գործողությունը քանակական առումով բավարարում է նվազագույն պահանջները (4 նյութ), բայց էական թերություններ ունի իրականացման որակի տեսանկյունից: Միայն նյութերի ստեղծումը և սահմանափակ տեղադրումը չի կարող համարվել լիարժեք իրազեկման արշավ և չի ապահովում ռազմավարությամբ նախատեսված տեղեկացվածության բարձրացման նպատակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, մշտադիտարկման խումբը գործողությունը քանակական առումով գնահատում է որպես կատարված, իսկ որակական առումով՝ որպես իրականացված ոչ ամբողջական, քանի որ բացակայում են ռազմավարական խնդրի լուծման ուղղությամբ էական արդյունքներ և չկան փաստեր, որոնք կվկայեն սպասվող վերջնական կամ միջանկյալ ազդեցության իրականացումը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.10. Իրականացնել պալիատիվ խնամքի և ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ շարունակական վերապատրաստումներ՝ բուժաշխատողների համար

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների,	2024թ. ավարտի դրությամբ վերապատրաստված բուժաշխատողների թվի աճ առնվազն 50%-ով՝ ի համեմատություն ելակետային տվյալների:	Առողջապահության նախարարություն	ԱՍՀՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է**

պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	Վերապատրաստումներն իրականացվել են ՄԱԿ և ԵՄ միջազգային-իրավական չափանիշների հիման վրա՝ վերապատրաստումներն իրականացնելով առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ:			ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** 2024 թվականին կազմակերպվել է մեկ կրեդիտավորված դասընթաց «Պալիատիվ բժշկություն» թեմայով, որին մասնակցել է ՀՀ-ում գործող 10 պալիատիվ բժիշկներից 7-ը: Ըստ նույն աղբյուրի՝ վերապատրաստված բուժաշխատողների թիվը աճել է առնվազն 70%-ով:

Գործողությամբ բացակայում է կատարված միջոցառումների որակական ազդեցության ստուգման ցուցիչը:

Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ վերապատրաստումների քանակական ցուցանիշները կատարվել են (վերապատրաստվել են 70%-ը), սակայն բացակայում է դրանց որակական գնահատումը, մասնավորապես՝ առկա չեն տեղեկություններ վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման մասին:

Այսպիսով, բացակայում են վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Կատարող մարմինների կողմից չեն ստուգվել ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ համադրել արդյունքները:

Ուստի, չնայած այն հանգամանքին, որ քանակական առումով գործողությունը կատարվել է՝ գործողության արդյունքային որակական բաղադրիչի և ռազմավարական նպատակների հետ դրա փոխկապակցության մասին որևէ վերլուծություն այս փուլում առկա չէ: Առանց համակարգված գնահատման գործընթացների՝ վերապատրաստման խորքային արդյունավետությունը մնում է անորոշ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.11. Բարձրացնել հղիության արհեստական ընդհատման ծառայությունների մատչելիությունը կանանց խոցելի խմբերի համար

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը հաստատված է ՀՀ կառավարության կողմից	Առողջապահության նախարարություն	ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** 2024 թվականի օգոստոսի 6-ից ուժի մեջ է մտել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Ըստ ընդունված փոփոխությունների բարձրացվել է հղիության արհեստական ընդհատման մատչելիությունը ոչ միայն խոցելի խմբերի այլև բոլոր կանանց համար:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.12. Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործողների բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ օրենսդրության բարելավում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների,	Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն)	Առողջապահության նախար	ԱՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	նյութեր օգտագործողների բժշկական օգնությունը և սպասարկումը կարգավորող առանձին օրենքի ընդունում: Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործողների բժշկական իրավունքների սահմանում:	արություն		

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:**

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ 2024 թվականին «Թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է, սակայն այս գործընթացը տեղի ունեցավ ուշացումով, քանի որ ըստ նախնական պլանի այն պետք է իրականացվեր 2023 թվականին: Արդյունքում ստացվում է, որ 2024 թվականի ընթացքում շահառու խմբերը չունեին իրավունքների և երաշխիքների համար անհրաժեշտ վերանայված օրենսդրական հիմքեր՝ բժշկական օգնություն ստանալիս:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.13. Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործողների թվաքանակի նվազեցման և առանց թմրամիջոցների առողջ հասարակություն ունենալու վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների իրականացում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և	Ուսումնական հաստատություններում սովորողների կողմից թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործման	Առողջապահության նախարարություն	ԿԳՄՄՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	կամ չարաշահման դեպքերի նվազեցում 50 %-ով: Բնակչության կողմից թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործման ու չարաշահման դեպքերի նվազեցում 20 %-ով:			

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:**

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի թիվ 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին որոշում) որոշման պահանջների և ՀՀ ԿԳՄՍՆ 2023 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 2556-Ա/2՝ «5-11 դասարանների «Առողջ ապրելակերպ» խմբակի չափորոշիչը և ուսումնական ծրագիրը» գործածության երաշխավորելու մասին հրամանի՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակը ընդգրկված է ՀՀ ուսումնական հաստատությունների առարկայացանկում: 8-11-րդ դասարանների ծրագրերում ընդգրկված են առողջ ապրելակերպի վերաբերյալ այլ նյութեր ևս:

Այսպիսով, հանրային իրազեկմանն ուղղված աշխատանքներ իրականացվել են, սակայն դեպքերի նվազեցման տոկոսային վիճակագրության մասին տեղեկատվություն առկա չէ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.14. Մշակել «Անհայտ կորած անձանց մասին» օրենքի նախագիծը և կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ վերաբերելի իրավական ակտերում՝նախատեսելով անհայտ կորածի իրավական կարգավիճակը, ինչպես նաև անկախ մասնագիտական կառույցի ստեղծումը, որը պետք է զբաղվի անհայտ կորած անձանց ճակատագրի և գտնվելու մասին տեղեկությունների ձեռք բերմամբ: Օրենքի նախագիծը ենթադրում է նաև անհայտ կորածի հարազատների հանդեպ պարտավորու-թյունների ստանձնում և անհայտ կորելու հանգամանքների քննություն

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել ռազմական գործողություններից տուժած	2024 թվականի գործողության համար	ԱՆ	ՊՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

անձանց և նրանց ընտանիքի անդամների, գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների, կալանավորված անձանց և դատապարտյալների, պալիատիվ բուժման կարիք ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, հղի կանանց և բնակչության այլ ներկայացուցիչների առողջապահության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը՝ զուգահեռաբար բարձրացնելով իրազեկվածությունը տրամադրվող ծառայությունների ու առկա հնարավորությունների մասին:	սահմանված չեն ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ		ՆԳՆ ԱԱԾ ԱՍՀՆ Գլխավոր դատախազություն ՔԿ	

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** Մշակվել է «Ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին» օրենքի նախագիծը, որը դեռևս հանրային քննարկման չի ներկայացվել: Այն ուղարկվել է շահագրգիռ մարմինների կարծիքի:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

«ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈԼՈՐՏ 5-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	14	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	9	64.29%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	3	21.43%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	2	14.29%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 4-ը համապատասխանում էին սահմանված հատկանիշներին, որի գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	4	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	4	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ՈԼՈՐՏ 6. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ապահովել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը հավաքների իրականացման ընթացքում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 6.1. Վերանայել հավաքների և այլ զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանության գործողությունները կանոնակարգող «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» օրենքները՝ միջազգային չափորոշիչների և մարդու իրավունքների համապատասխանելիության առնչությամբ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը հավաքների իրականացման ընթացքում:	Հավաքների և այլ զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանության գործողությունները կանոնակարգող օրենքների նախագծերը մշակված են, որը հիմնավորվում է մարդու իրավունքների պաշտպանության և միջազգային չափորոշիչների համապատասխանության տեսանկյունից ներպետական օրենսդրությամբ և պրակտիկայով	ՆԳՆ	ԱՆ ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** 2024 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունվել է «Ոստիկանության գվարդիայի մասին» և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը, որի արդյունքում նախատեսվում է ստեղծել ոստիկանական մասնագիտացված նոր ծառայություն՝ Ոստիկանական գվարդիա:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 6.2. Բարձրացնել Ներքին գործերի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումների (հասարակական կարգի պահպանությանն առնչվող) ղեկավարների և ծառայողների՝ հավաքների ազատության վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև ձևավորել հավաքների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության, հույզերի և զանգվածի կառավարման վրա հիմնված պրակտիկան

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**

Ապահովել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը հավաքների իրականացման ընթացքում:	2024թ.-ի վերջ Ներքին գործերի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումների (հասարակական կարգի պահպանությանն առնչվող) ղեկավարների և ծառայողների 50%-ը վերապատրաստված են: ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կրթահամալիրի բակալավրի և քոլեջի սովորողների 100%-ը պատրաստված են՝ հավաքների ազատության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և հավաքների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության առնչությամբ:	ՆԳՆ	Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված 2023 թվականի կատարողականի հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Նախատեսված էր ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական ծրագրերում բակալավրի և քոլեջի սովորողների համար համապատասխան թեմաներ ներառել ու բակալավրի և քոլեջի սովորողների համար կազմակերպել մասնագիտական պատրաստում: Նույն աղբյուրի համաձայն՝ մոդուլի մշակման աշխատանքները ընթացքի մեջ էին:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված 2024 թվականի կատարողականի հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Վերապատրաստվել է ՆԳՆ մասնագիտացված ստորաբաժանումների (հասարակական կարգի պահպանությանն առնչվող) ղեկավարների և ծառայողների 50%-ը: Մոդուլի կարգավիճակի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ առկա չեն:

Գործողությամբ բացակայում է կատարված միջոցառումների որակական ազդեցության ստուգման ցուցիչը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ սույն գործողությունը 2023-2024 թվականների կտրվածքով չի իրականացվել ամբողջական ծավալով:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվել է, որ վերապատրաստումների ազդեցության և արդյունքների գնահատման մեխանիզմներ չեն սահմանվել: Չի իրականացվել մասնակիցների գիտելիքների նախնական կամ ամփոփիչ ստուգում, ինչպես նաև բացակայում է հստակ մեթոդաբանական մոտեցում՝ վերապատրաստումների ազդեցության և արդյունավետության գնահատման ուղղությամբ:

Սա նշանակում է, որ չնայած քանակական ցուցանիշների ապահովմանը, գործողության **որակական բաղադրիչը մնում է խոցելի և անբավարար**: Առանց հստակ կառուցված մեխանիզմների հնարավոր չէ պարզել՝ արդյոք վերապատրաստումներն իրականում նպաստել են ռազմավարական նպատակի նվաճմանը, գործնական կարողությունների զարգացմանը կամ որևէ տեսանելի համակարգային բարեփոխման:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, գործողության կատարողականի ընդհանուր գնահատականը կարող է լինել միայն «մասնակի կատարված», քանի որ չի իրականացվել ծրագրված ամբողջ ծավալով, իսկ իրականացված մասի որակական արդյունքների վերաբերյալ հիմնավոր տվյալներ չկան:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

«ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՈԼՈՐՏ 6-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	2	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1	50%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	1	50%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 1-ը համապատասխանում էր սահմանված հատկանիշներին, որի գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ՈԼՈՐՏ 7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ապահովել կրթության իրավունքի իրացման ընթացքում խոչընդոտների վերացումը՝ մարդու իրավունքների ապահովման, կրթությունից դուրս մնացած երեխաների իրավունքների պաշտպանության, համընդհանուր ներառականության ապահովման, նախադպրոցական անվճար կրթության հասանելիության համատեքստում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 7.1. Երաշխավորել շարունակական վերապատրաստումը միջին և ավագ դպրոցների ուսուցիչների համար ժողովրդավարություն, օրենքի և իրավունքի գերակայություն վերաբերյալ թեմաներով: Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռի զարգացնել և ամրապնդել ուսուցիչների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները մարդու իրավունքների պաշտպանության Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպայի խորհրդի միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների վերաբերյալ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել կրթության իրավունքի իրացման ընթացքում խոչընդոտների վերացումը՝ մարդու իրավունքների ապահովման, կրթությունից դուրս մնացած երեխաների իրավունքների պաշտպանության, համընդհանուր ներառականության ապահովման, նախադպրոցական անվճար կրթության հասանելիության համատեքստում:	2024թ. ավարտի դրությամբ վերապատրաստված ուսուցիչների թվի աճ առնվազն 60%-ով՝ ի համեմատություն ելակետային տվյալների: Վերապատրաստումներն իրականացվել են Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպայի խորհրդի միջազգային-իրավական չափանիշների հիման վրա՝ վերապատրաստումներն իրականացնելով առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ:	ԿԳՄՍՆ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** 2023-2024 թվականների ընթացքում վերապատրաստված ուսուցիչների թիվը ավելացել է առնվազն 60%-ով:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ գործողությունը չի ներառում վերապատրաստումների ազդեցության և արդյունքների գնահատման որևէ մեխանիզմ: Չնայած այն հանգամանքին, որ վերապատրաստումներն իրականացվել են կարիքների նախնական գնահատման հիման վրա, դրանց արդյունավետությունը չի գնահատվել. մասնակիցների գիտելիքների նախնական կամ ամփոփիչ ստուգում չի իրականացվել, բացակայում են մեթոդաբանական մոտեցումներ վերապատրաստումների որակական ազդեցության գնահատման ուղղությամբ: Բացի այդ, գործողության շրջանակներում չեն սահմանվել որակական գնահատման ցուցիչներ, ինչը խոչընդոտում է վերապատրաստման ազդեցության վերաբերյալ հետևություններ անելը:

Սա նշանակում է, որ չնայած քանակական ցուցանիշների ապահովմանը, գործողության որակական բաղադրիչը մնում է **խոցելի և անբավարար**: Առանց հստակ կառուցված մեխանիզմների հնարավոր չէ պարզել՝ արդյոք վերապատրաստումներն իրականում նպաստել են ռազմավարական նպատակի նվաճմանը, գործնական կարողությունների զարգացմանը կամ որևէ տեսանելի համակարգային բարեփոխման:

Ինչպես նշվել է 4.3 գործողության շրջանակներում, որակական գնահատման ցուցիչները և ընթացակարգային այլ մեխանիզմներ այս պահին քննարկման և նախագծային փուլում են ԿԳՄՄՆ-ում, որոնք հստակեցվելուց հետո կամրագրվեն համապատասխան իրավական ակտերում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈԼՈՐՏ 7-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	0	0%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 1-ը համապատասխանում էր սահմանված հատկանիշներին, որի գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ՈԼՈՐՏ 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ, ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ապահովել սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների սոցիալական ապահովության ու նվազագույն կենսապայմանների իրավունքի իրացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, պրոբացիայի շահառուներին և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ապահովել սոցիալական աշխատանքի ու աշխատանքային իրավունքների արդյունավետ իրականացումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 9.1. Կազմակերպել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց սոցիալական ինտեգրման կամ վերաինտեգրմանն ուղղված օգնությունը՝ ապահովելով անձանց ինքնուրույնությունն ու ներառականությունը հասարակական կյանքում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների սոցիալական ապահովության ու նվազագույն կենսապայմանների իրավունքի իրացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, պրոբացիայի շահառուներին և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ապահովել սոցիալական աշխատանքի ու աշխատանքային իրավունքների արդյունավետ իրականացումը:	Հոգեկան առողջության խնդիր ունեցող 10 անձանց սոցիալական ինտեգրումը և վերաինտեգրումն իրականացված է: Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց սոցիալական ինտեգրման և վերաինտեգրման արդյունավետությունը բարձրացված է մասնագիտական մոտեցումների կիրառմամբ:	ԱՍՀՆ	ԱՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված 2023-2024թթ կատարողականների հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված:** Ընդհանուր թվով, հաշմանդամություն ունեցող 478 անձանց սոցիալական ինտեգրումը և վերաինտեգրումը իրականացված է:

Մշտադիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ հաշմանդամություն ունեցող (այդ թվում՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներով) անձանց սոցիալական ներառումն ապահովելու ուղղությամբ ՀՀ պետական բյուջեի առանձին ծախսային միջոցառումների շրջանակներում սոցիալ-վերականգնողական ծառայություններ են պատվիրակվում ՀԿ-ներին՝ ցերեկային կենտրոններում և խմբային փոքր տներում հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 9.2. Կազմակերպել պրոբացիայի շահառուներին և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած անձանց սոցիալական ինտեգրմանը կամ վերաինտեգրմանն ուղղված օգնությունը՝ ապահովելով անձանց ինքնուրույնությունն ու ներառականությունը հասարակական կյանքում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների սոցիալական ապահովության ու նվազագույն կենսապայմանների իրավունքի իրացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, պրոբացիայի շահառուներին և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ապահովել սոցիալական աշխատանքի ու աշխատանքային իրավունքների արդյունավետ իրականացումը:	Պրոբացիայի շահառուներին և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած անձանց սոցիալական ինտեգրումը և վերաինտեգրումը՝ յուրաքանչյուր խմբից առնվազն 10-ական անձի համար, իրականացված է: Պրոբացիայի շահառուներին և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած անձանց սոցիալական ինտեգրման և վերաինտեգրման արդյունավետությունը բարձրացված է մասնագիտական մոտեցումների կիրառմամբ:	ԱՆ	ԱՍՀՆ Առողջապահության նախարարություն	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված 2023-2024թթ կատարողականների հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Պրոբացիայի ծառայությունը շահառուների

վերասոցիալականացման նպատակով մշակել և իրականացրել է կրթական, մասնագիտական վերապատրաստմանը և վերառրակավորմանը, զբաղվածությանը և վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր: Արդյունքում, իրականացվել է պրոբացիայի 15 շահառուների և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած 15 անձանց սոցիալական ինտեգրման և վերաինտեգրման միջոցառումներ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ, ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ» ՈԼՈՐՏ 9-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	2	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	2	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	0	0%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

ՈԼՈՐՏ 10. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ապահովել երեխայի իրավունքների արդյունավետ իրականացումը և երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը որդեգրման գործընթացի, խնամակալության և հոգաբարձության կազմակերպման, իրազեկվածության բարձրացման, երեխայի իրավունքների խախտումներին արձագանքելու, կատարողական վարույթի, ինչպես նաև երեխայի լավագույն շահի պաշտպանությանն ուղղված այլ գործողությունների իրականացման ընթացքում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10.1. Բարձրացնել երեխայի իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոգեկան առողջության, մտավոր և տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների, փախստական և ապաստան հայցող երեխաների, արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությանը

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել երեխայի իրավունքների արդյունավետ իրականացումը և երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը որդեգրման գործընթացի, խնամակալության և հոգաբարձության կազմակերպման, իրազեկվածության բարձրացման, երեխայի իրավունքների խախտումներին արձագանքելու, կատարողական վարույթի, ինչպես նաև երեխայի լավագույն շահի պաշտպանությանն ուղղված այլ գործողությունների իրականացման ընթացքում:	Երեխայի իրավունքների վերաբերյալ պաստառները պատրաստված են՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոգեկան առողջության, մտավոր և տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների, արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությանը: Երեխայի իրավունքների վերաբերյալ առնվազն 3 տեղեկատվական նյութ պատրաստված է, այդ թվում՝ իրավունքների պաշտպանության միջոցների մասին՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոգեկան առողջության, մտավոր և տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների, փախստական և ապաստան հայցող երեխաների, արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների վերաբերյալ	ԱՍՀՆ	ԿԳՄՍՆ ԱՆ ՆԳՆ ՄԻՊ ՏԿԵՆ Երևանի քաղաքապետարան	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

	իրազեկվածությանը: Երեխայի իրավունքների վերաբերյալ առնվազն 3 տեսաձայնագրություն պատրաստված է՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոգեկան առողջության, մտավոր և տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների, փախստական և ապաստան հայցող երեխաների, արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությանը: Երեխայի իրավունքների վերաբերյալ առնվազն 3 իրազեկման ակցիա իրականացված է՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոգեկան առողջության, մտավոր և տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների, փախստական և ապաստան հայցող երեխաների արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների վերաբերյալ:			

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված 2023-2024թթ. կատարողականների հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:**

ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ կրթական հաստատությունների ավելի քան 40%-ում փակցված են պաստառներ, որոնց մի մասը պատրաստվել են աշակերտների մասնակցությամբ: Որոշ դեպքերում պատրաստման աշխատանքներին ներգրավված են եղել նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Ի լրումն, ԱՍՀՆ ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող բոլոր կազմակերպություններում, ինչպես նաև պետության կողմից դրամաշնորհի ձևով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակում 13 ՀԿ-ների կողմից իրականացվող երեխաների ցերեկային կենտրոններում փակցված են պաստառները:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ իրականացվել է մշտադիտարկում՝ բոլոր նախանշված վայրերում պաստառները առկա են: Միևնույն ժամանակ, պարզ դարձավ, որ պաստառները հարմարեցված չեն տեսողական խնդիրներ ունեցող երեխաների համար, չնայած այն հանգամանքին, որ գործողության համաձայն հատուկ ուշադրություն պետք է դարձվեր տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաներին: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ըստ ԱՍՀՆ-ի թեև պաստառները հարմարեցված չեն եղել, որը պահաջում է հատուկ նյութատեխնիկական ռեսուրսների առկայություն, այնուամենայնիվ նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող բոլոր կազմակերպությունները, ինչպես նաև պետության կողմից դրամաշնորհի ձևով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակում 13 ՀԿ-ները թեմատիկ հանդիպումների շրջանակում ներկայացրել են տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների կրթական իրավունքի առանձնահատկությունները, օր.՝ հրավիրվել է տիֆլոմանկավարժ, ով երեխաներին ներկայացրել է բրայլյան համակարգը, գրամեքենան և այլն:

Նկատի ունենալով կատարված աշխատանքները և ուղղակի արդյունքային ցուցանիշը, որը պահանջում է հատուկ ուշադրություն դարձնել տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաներին, գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10.2. Սահմանել երեխաների իրավունքների խախտումների հասկացությունը և ստեղծել դրա հաշվառման ու վարման միասնական վիճակագրական համակարգ՝ սահմանելով «երեխայի իրավունքների խախտում» հասկացությունը և լիազորող նորմ՝ երեխայի իրավունքների հաշվառման և վարման միասնական վիճակագրական համակարգի վերաբերյալ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել երեխայի իրավունքների արդյունավետ իրականացումը և երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը որդեգրման գործընթացի, խնամակալության և հոգաբարձության կազմակերպման, իրազեկվածության բարձրացման, երեխայի իրավունքների խախտումներին արձագանքելու, կատարողական վարույթի, ինչպես նաև երեխայի լավագույն շահի	«Երեխայի իրավունքների և երեխաների պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը մշակված է և ներկայացված է ՀՀ Ազգային ժողով:	ԱՍՀՆ	ԿԳՄՄՆ ԱՆ ՆԳՆ ՄԻՊ ՏԿԵՆ Քննչական կոմիտե	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

պաշտպանությանն ուղղված այլ գործողությունների իրականացման ընթացքում:			ՀՀ դատախազություն	

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: 2023 թվականի ընթացքում մշակվել է «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի նախագիծը, որով սահմանվել է «երեխայի իրավունքների խախտում» հասկացությունը և նախատեսվել է լիազորող նորմ սոցիալական պաշտպանության ոլորտում լիազոր պետական մարմնի համար՝ վարել և համակարգել երեխայի իրավունքների խախտման դեպքերը, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տեղեկատվական համակարգը: 2024 թվականի սույն նախագիծը լրամշակվել է: Բացի այդ, մշակվել է «ՀՀ ընտանեկան օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը: Հաշվետու ժամանակահատվածում նախագծերի փաթեթը ուղարկվել է շահագրգիռ մարմիններին կարծիքի, իսկ 2025 թ. մայիսի 29-ին ՀՀ կառավարության N 655-Ա որոշմամբ հավանություն է տրվել նախագծերին:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ գործընթացի ամբողջական իրագործումը ձգձգվել է՝ պայմանավորված սոցիալական աջակցության մասին օրենքում նախատեսվող փոփոխությունների անհրաժեշտությամբ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10.3. Կատարելագործել կատարողական վարույթի շրջանակներում ծնողի և մերձավոր ազգականների հետ երեխայի տեսակցությունների ապահովման կարգը

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել երեխայի իրավունքների արդյունավետ իրականացումը և երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը որդեգրման գործընթացի, խնամակալության և հոգաբարձության կազմակերպման, իրազեկվածության բարձրացման, երեխայի իրավունքների խախտումներին արձագանքելու, կատարողական վարույթի, ինչպես նաև երեխայի լավագույն շահի	«Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ. ընդունվել է նախագծին հավանություն տալու մասին Կառավարության որոշում: Երեխայի տեսակցության կատարողական վարույթի իրականացման կարգը սահմանելու մասին ՀՀ արդարադատության նախարարի հրամանն ընդունված է:	ԱՆ	ԱՄՀՆ ԿԳՄՄՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

պաշտպանությանն ուղղված այլ գործողությունների իրականացման ընթացքում:	Երեխայի տեսակցության կատարողական վարույթի իրականացման կարգի գործադրման արդյունքում ավելացել են կատարողական վարույթի շրջանակում հաջողությամբ կազմակերպված երեխայի տեսակցությունների քանակները, ինչպես նաև սահմանվել են տեսակցության վարույթի շրջանակում անկախ երեխայի տարիքից երեխայի կարծիքը լսելու պարտադիր հիմքերը և լսված լինելու իրավունքի իրացումը համապատասխան մասնագետների ներգրավմամբ ապահովելու վերաբերյալ կարգավորումներ:			

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված 2023-2024թթ. կատարողականների հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:**

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ ՀՀ ԱՆ-ի հրամանը ընդունվել է: Միևնույն ժամանակ, իրականացվել է մշտադիտարկում, որով գրանցվել է բողոքների թվաքանակի նվազումը: Սակայն, տեսակցության խախտումների նվազման վերաբերյալ վիճակագրություն չի վարվել: Վիճակագրություն վարվել է միայն բողոքների հիման վրա:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10.4. Հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը՝ բարելավել երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման ընթացակարգը, ներառյալ՝ առանց ուղեկցության և ծնողներից բաժանված երեխաների համար

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել երեխայի իրավունքների արդյունավետ իրականացումը և երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը որդեգրման գործընթացի, խնամակալության և հոգաբարձության կազմակերպման, իրազեկվածության	2024 թվականի համար արդյունքային ցուցիչ սահմանված չէ	ԱՍՀՆ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**

բարձրացման, երեխայի իրավունքների խախտումներին արձագանքելու, կատարողական վարույթի, ինչպես նաև երեխայի լավագույն շահի պաշտպանությանն ուղղված այլ գործողությունների իրականացման ընթացքում:				

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Ըստ նույն աղբյուրի՝ երեխաների լավագույն շահերի գնահատման և որոշման ընթացակարգը բարելավված է և առնվազն 2 վերապատրաստում իրականացված է երեխաների, ներառյալ՝ առանց ուղեկցության և ծնողներից բաժանված երեխաների հետ աշխատող սոցիալական աշխատողների համար: Հաշվետվությամբ նաև որպես կատարված գործողության նկարագիր նշված է, որ երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման նպատակով ուսումնասիրվել են նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող հաստատությունների և «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում պետության կողմից պատվիրակված ծառայություններ իրականացնող ՀԿ-ների աշխատանքում կիրառվող ընթացակարգերը՝ երեխայի լավագույն շահերի գնահատման և որոշման ընթացակարգը բարելավելու նպատակով:

Ի լրումն, ԱՍՀՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն, «Երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման ընթացակարգի բարելավման մեխանիզմներ» թեմայով եռօրյա դասընթացի ընթացքում մասնագետները ստացել են գիտելիքներ երեխայի լավագույն շահի սկզբունքի կիրառման և զարգացման նախադրյալների, երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված հիմնարար սկզբունքների, երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի կիրարկման առաջնային ուղեցույցի՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 ընդհանուր մեկնաբանության, երեխային վերաբերելի հարցերում իր լավագույն շահերը առաջնային դիտարկելու և հաշվի առնելու երեխայի իրավունքի և դրա իրացման մեխանիզմների մասին, գործնականում գործողությունների հաջորդականությանը՝ երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման գործընթացում:

Այսպես, սույն գործողության առաջին և առանցքային բաղադրիչը պահանջում է *«հաշվի առնել միջազգային լավագույն փորձը»,* սակայն ներկայացված հաշվետվությամբ և տրամադրված տեղեկատվությամբ, ինչպես նաև ՖԽՔ-ի ընթացքում ներկայացված տեղեկատվության շրջանակներից բացակայում է որևէ հիշատակում կամ ապացույց միջազգային փորձի ուսումնասիրության, այդ փորձի հիման վրա կատարված վերլուծության կամ արված առաջարկությունների վերաբերյալ:

Բացի վերոգրյալի, հաշվետվությունում նշված է պատվիրակված ծառայություններ իրականացնող ՀԿ-ների կողմից կիրառվող գործող ընթացակարգերի միայն «ուսումնասիրություն», այլ ոչ թե փաստացի «բարելավում», ինչը պահանջվում է գործողության թիրախով: Գործող ընթացակարգերի ուսումնասիրությունը չի կարող դիտարկվել որպես ընթացակարգի բարելավում, քանի որ բացակայում են կոնկրետ փոփոխությունները:

Հաշվետվությունը չի պարունակում հստակ տեղեկատվություն առանց ուղեկցության և ծնողներից բաժանված երեխաների համար մշակված առանձնահատուկ մոտեցումների վերաբերյալ, ինչը գործողության հատուկ պահանջ է:

Թեև նշվում է, որ իրականացվել են առնվազն 2 վերապատրաստումներ, սակայն բացակայում է տեղեկատվությունը այդ վերապատրաստումների բովանդակության, մեթոդաբանության և արդյունավետության վերաբերյալ: Վերապատրաստումների իրականացումը չի կարող փոխարինել բուն ընթացակարգի բարելավմանը:

Հաշվետվությունը չի պարունակում որևէ չափելի ցուցանիշ, որը թույլ կտար գնահատել կատարված աշխատանքների արդյունքը և փաստացի ազդեցությունը երեխաների լավագույն շահերի պաշտպանության վրա:

Ելնելով վերոնշյալից, սույն գործողությունը չի կարող գնահատվել որպես մասնակի կատարված, քանի որ չի իրականացվել գործողության հիմնական և առանցքային բաղադրիչը՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա ընթացակարգի փաստացի բարելավումը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ» ՈԼՈՐՏ 10-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	4	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	3	75.0%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1	25.0%

ՈԼՈՐՏ 11. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ապահովել մարդու իրավունքների ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդումը՝ ՄԱԿ-ի տեսչական մարմինների կողմից տրված հանձնարարականների կատարման, զեկույցների ներկայացման և հաջորդիվ իրականացվող քայլերի միջոցով

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 11.1. Մշակել և ընդունել մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի տեսչական մարմինների կողմից տրված հանձնարարականների կատարման, զեկույցների ներկայացման և հաջորդիվ իրականացվող քայլերի ապահովման ազգային մեխանիզմ

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2023-2024թթ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապահովել մարդու իրավունքների ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդումը՝ ՄԱԿ-ի տեսչական մարմինների կողմից տրված հանձնարարականների կատարման, զեկույցների ներկայացման և հաջորդիվ իրականացվող քայլերի միջոցով:	Ուսումնասիրվել և ծրագրվել է յուրաքանչյուր տարվա կտրվածքով մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի տեսչական մարմինների կողմից Հայաստանին տրված հանձնարարականների կատարման ժամկետները, ինչպես նաև ուսումնասիրվել են մարդու իրավունքների ՄԱԿ ընթացակարգերի շրջանակում ստանձնած պարտավորությունների և Հայաստանին տրված հանձնարարական-ների՝ յուրաքանչյուր տարվա կտրվածքով կատարման ենթական գործողությունները Իրականացվել է համապատասխան միջգերատեսչական աշխատանքային խմբերի ձևավորում, մշակվել է աշխատանքների ժամանակացույց	ԱԳՆ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված:**

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ ԱԳՆ-ի կողմից ուսումնասիրվել և ծրագրվել են յուրաքանչյուր տարվա կտրվածքով մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի տեսչական մարմինների կողմից ՀՀ-ին տրված հանձնարարականների կատարման ժամկետները:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ» ՈԼՈՐՏ 11-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	0	0%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

ՈԼՈՐՏ 12. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Երաշխավորել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների և ազատությունների լիակատար պաշտպանությունը՝ ներառյալ ապահովել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բնակվող անձանց վերաբերյալ համապարփակ և ամբողջական վարչական տվյալների բազայի ստեղծումը՝ իրավունքների պաշտպանության գործընթացներում, այդ թվում՝ միջազգային իրավական գործընթացներում օգտագործելու նպատակով

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 12.1. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձանց վերաբերյալ համապարփակ և ամբողջական վարչական տվյալների՝ ներառյալ նրանց անհատական տվյալների, հաշվառման հասցեի, տրամադրվող կենսաթոշակի, նպաստի, ինչպես նաև գույքի (այդ թվում՝ հողի) նկատմամբ իրավունքների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Երաշխավորել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների և ազատությունների լիակատար պաշտպանությունը՝ ներառյալ ապահովել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բնակվող անձանց վերաբերյալ համապարփակ և ամբողջական վարչական տվյալների բազայի ստեղծումը՝ իրավունքների պաշտպանության գործընթացներում, այդ թվում՝ միջազգային իրավական գործընթացներում օգտագործելու նպատակով:	Առկա է նոր էլեկտրոնային համակարգ՝ թարմացված տվյալներով: Տվյալների բազան ամբողջությամբ ներդրվել է և հասանելի է	ՆԳՆ	ԱՍՀՆ Վիճակագրական կոմիտե	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:**

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ իրավական ակտի մշակումը նախնական փուլում է: Էլեկտրոնային հարթակը նախատեսված է ԼՂ-ից տեղահանվածների համար և նույնականացման միջոցով իրենք կարող են գեներացնել իրենց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը: Ծրագրի գործարկման հետ կապված ձգձգումներ կան՝ հաշվի առնելով խնդրի համակարգային բնույթը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 12.2. Մշակել և տարածել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկման նյութեր

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Երաշխավորել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների և ազատությունների լիակատար պաշտպանությունը՝ ներառյալ ապահովել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բնակվող անձանց վերաբերյալ համապարփակ և ամբողջական վարչական տվյալների բազայի ստեղծումը՝ իրավունքների պաշտպանության գործընթացներում, այդ թվում՝ միջազգային իրավական գործընթացներում օգտագործելու նպատակով:	Մշակվել է հանրային իրազեկման 2 տեղեկատվական նյութ և 2 տեսաձայնագրություն: Մշակված նյութերը տարածվել են ԶԼՄ-ներով և սոցիալական ցանցերի միջոցով:	ՆԳՆ	ԱՆ ԱՍՀՆ Փաստաբանների պալատ ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:** Մշակվել և տարածվել է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ 2-ից ավել տեղեկատվական նյութ և տեսաձայնագրություն:

Ըստ մշտադիտարկման արդյունքերի թիրախային թեմայի վերաբերյալ պատրաստվել և հրապարակվել է 7 տեղեկատվական նյութ, այդ թվում՝ 3 տեսանյութ, 3 հաղորդագրություն: Հանրային հեռուստաընկերության կողմից մշակվել է 2 տեսանյութ, 3 հրապարակում: ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար կազմակերպվել է աշխատաժողով: ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից պատրաստվել են տեղեկատվական նյութեր, ԶԼՄ-ների հետ համագործակցությամբ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ հրապարակվել է 100-ից ավելի նյութ: ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից պատրաստվել և պաշտոնական կայքում ու սոցիալական ցանցում հրապարակվել է թիրախային թեմայի շուրջ ընդհանուր 32 տեղեկատվական նյութ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 12.3. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ապահովում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական նպատակի մակարդակում	**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)**	**Կատարող մարմին**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Երաշխավորել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների և ազատությունների լիակատար պաշտպանությունը՝ ներառյալ ապահովել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բնակվող անձանց վերաբերյալ համապարփակ և ամբողջական վարչական տվյալների բազայի ստեղծումը՝ իրավունքների պաշտպանության գործընթացներում, այդ թվում՝ միջազգային իրավական գործընթացներում օգտագործելու նպատակով:	Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման գործընթացը մեկնարկել է: Ոչ նյութական մշակութային ժառանգության էլեկտրոնային շտեմարանը ներառում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության և դրա պահպանության նպատակով անցկացվող ծրագրերի վերաբերյալ առանձին գլուխ, որում ներառված տվյալները պարբերաբար թարմացվում են: Տվյալների բազան ամբողջությամբ հասանելի է օգտագործողներին:	ԿԳՄՄՆ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է:**

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման գործընթացը մեկնարկել է և ընթացքի մեջ է: Ոչ նյութական մշակութային ժառանգության էլեեկտրոնային շտեմարանը ներառում է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության և դրա պահպանության նպատակով անցկացվող ծրագրերի վերաբեյալ առանձին գլուխ, որում ներառված տվյալները պարբերաբար թարմացվում են:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՈԼՈՐՏ 12-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	3	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	2	66.7%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	1	33.3%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 1-ը համապատասխանում էր սահմանված հատկանիշներին, որի գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Ոլորտ	Ընթացակարգային (քանակական) ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ		Ազդեցության մակարդակի (որակական) ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	
	Գնահատված գործողությունների թիվը	*Գործողությունների կատարողական ցուցանիշը*	*Գնահատված գործողությունների թիվը*	*Գործողությունների կատարողական ցուցանիշը*
Ոլորտ 1	2	0%	1	0%
Ոլորտ 2	11	36.36%	3	0%
Ոլորտ 3	12	33.33%	1	0%
Ոլորտ 4	8	0%	4	0%
Ոլորտ 5	14	64.29%	4	0%
Ոլորտ 6	2	50%	1	0%
Ոլորտ 7	1	100%	1	0%
Ոլորտ 9	2	100%	-	0%
Ոլորտ 10	4	0%	-	0%
Ոլորտ 11	1	100%	-	0%
Ոլորտ 12	3	66.7%	1	100%

2. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	60
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	24
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	26
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	10
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	40%

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.՝ հաշվարկված վարիացիոն շարքի համակշռված միջինի մեթոդով	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	60
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	24
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	26
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	10
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	61,67%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	16
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	1
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	14
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	1
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	6.25%

3. ՎԵՐ ՀԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Մեթոդական խնդիրներ և առաջարկներ[11]

1) ՄԻՊ ռազմավարության գործողությունների ծրագրում բացակայում է նույնանման գործողությունների համար միասնական մոտեցում՝ որակական ազդեցության գնահատման հարցում: Օրինակ՝ որոշ վերապատրաստումների համար սահմանված է որակական ցուցիչ (80% գիտելիքի աճ), մինչդեռ համանման այլ գործողությունների համար (օրինակ՝ 5.4, 5.10, 6.2) նման որակական ստուգման ցուցիչներ նախատեսված չեն:

   Առաջարկ
   Մշակել և ներդնել միասնական որակական գնահատման համակարգ ՄԻՊ ռազմավարության բոլոր նույնանման գործողությունների համար: Համանման միջոցառումների համար սահմանել հստակ չափելի որակական ցուցիչներ, որոնք կգնահատեն ոչ միայն իրականացման փաստը, այլև դրանց իրական ազդեցությունը: Սա կապահովի ծրագրի արդյունավետության ավելի օբյեկտիվ գնահատում և կբարձրացնի հաշվետվողականությունը:

2) Ռազմավարության Գործողությունների ծրագրում բացակայում են վերապատրաստումների արդյունավետության չափման հստակ գործիքներ: Սա անհնար է դարձնում գնահատել, թե որքանով են այդ վերապատրաստումներն իրապես նպաստում ռազմավարական նպատակների իրականացմանը, առավել ևս որ վերապատրաստումները մեծ թիվ են կազմում:

   Առաջարկ
   Ներդնել վերապատրաստումների արդյունավետության համապարփակ գնահատման համակարգ, որը կներառի՝
   - Վերապատրաստման նախնական և վերջնական գնահատման մեխանիզմներ՝ մասնակիցների գիտելիքների և հմտությունների փոփոխությունը չափելու համար
   - Ելակետային տվյալների հավաքագրում, որոնց հիման վրա հնարավոր կլինի օբյեկտիվորեն գնահատել ձեռք բերված գիտելիքները և հմտությունները
   - Վերապատրաստման երկարաժամկետ ազդեցության գնահատման մեթոդաբանություն՝ պարզելու համար, թե ինչպես են կիրառվում ստացված գիտելիքները գործնականում

3) Գործողությունների ծրագրի ընդհանուր գնահատականը ցույց է տալիս, որ նախատեսված գործողությունների զգալի մասը իրականացվել է մասնակի կամ չի ավարտվել ամբողջությամբ՝ նախապես սահմանված ժամկետներում: Այս իրավիճակը ցույց է տալիս ծրագրային արդյունավետության ոչ բավարար մակարդակի, ինչպես նաև ծրագրի նախագծման և իրականացման փուլերում համակարգային խնդիրների մասին:

[11] Առաջարկները կիրառելի են նաև մյուս ՄԻՊ ռազմավարության մշակման գործընթացում:

Առաջարկ

Ռազմավարական գործողությունների համար սահմանել ավելի իրատեսական ժամկետներ՝ հաշվի առնելով իրական ռեսուրսային հնարավորությունները և յուրաքանչյուր գործողության համար նախատեսելով ռիսկային պահուստ ժամանակ: Կատարողական ցուցանիշների համար անհրաժեշտ է սահմանել միջանկյալ նշաձողեր՝ գործողությունների ժամանակին իրականացումը ապահովելու համար:

Բ. Բովանդակային խնդիրներ և առաջարկներ

4) Ազատությունից զրկման վայրերում անանուն հաղորդումների ներկայացման իրավական հիմքերի ու ընթացակարգերի մշակման գործընթացում առկա են էական բացթողումներ (Գործողություն 2.1): Բացակայում են հստակ և ամբողջական կանոնակարգումներ, որոնք կապահովեին անանուն հաղորդումների ներկայացման արդյունավետ մեխանիզմների գործառույթը: Օրենսդրական փաթեթների մշակման գործընթացում բացակայում են միասնական մեթոդաբանական մոտեցումներ և հստակ ժամանակացույցեր:

Առաջարկ

Ապահովել մշակվող օրենսդրական ակտերի ամբողջականությունը՝ հստակ սահմանելով անանուն հաղորդման, դրա ներկայացման ուղիների, գաղտնիության երաշխիքների, քննության ընթացակարգի և այլ անհրաժեշտ բաղադրիչների կարգավորումները: Ձեռնպահ մնալ հարցերը ներքին կանոնակարգերի մակարդակով կարգավորելուց, քանի որ դրանք չեն ապահովում անհրաժեշտ թափանցիկություն և հաշվետվողականություն: Ապահովել ՀԿ-ների և փորձագիտական հանրության ավելի ակտիվ ներգրավում օրենսդրական նախագծերի մշակման և քննարկման գործընթացներում:

5) Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող իրազեկման արշավների ուղղության ներքո արձանագրվում են համակարգային բնույթի բացթողումներ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ երեխաների հավասար հնարավորությունների ապահովման և քաղաքականությունների արդյունավետության վրա (Գործողություն 10.1): Մասնավորապես, տեղեկատվական նյութերը լիարժեքորեն մատչելի չեն հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար: Իրազեկման արշավները իրականացվում են մասնակիորեն՝ առանց ազդեցության գնահատման հստակ մեխանիզմների, ինչը խոչընդոտում է դրանց շարունակական բարելավումը և նպատակային ուղղվածությունը:

Առաջարկ

Անհրաժեշտ է ապահովել տեղեկատվության համընդհանուր մատչելիություն՝ մշակելով և տարածելով թիրախային խմբերի համար հանրամատչելի նյութ, օրինակ՝ Բրայլյան գրատառով, ձայնային տարբերակով և ժեստերի լեզվով՝ համապատասխանեցված միջազգային մատչելիության չափանիշներին: Երկրորդ՝ պետք է մշակել համապարփակ իրազեկման ռազմավարություն, որը ներառի ազդեցության գնահատման հստակ մեխանիզմներ, թվային հարթակների առավել լայն կիրառում: Երրորդ՝ անհրաժեշտ է

ներդնել վիճակագրական տվյալների հավաքագրման և վերլուծության միասնական մեթոդաբանություն՝ միջազգային ստանդարտներին համահունչ ցուցանիշների հիմքով՝ ապահովելով տվյալների պարբերական և թափանցիկ հրապարակում: Չորրորդ՝ ներդնել երեխաների և պատանիների կողմից մշակված իրազեկման նյութեր (peer-to-peer մոտեցում): Հինգերորդ՝ կազմակերպել տարեկան մրցույթներ և միջոցառումներ, որոնք կխթանեն երեխաների մասնակցությունը իրազեկման արշավներին, և այլն:

6) Amicus curiae և Actio popularis ինստիտուտների գործուն մոդելների մշակման աշխատանքների երկարաձգում (Գործողություններ 3.2 և 3.7)

Առաջարկ

Ելնելով նրանից, որ ԱՆ-ում դեռևս քննարկվում է Amicus curiae ինստիտուտի ներդրման շրջանակը, առաջարկվում է ՀԿ-ների հետ համատեղ քննարկել և մշակելու ինստիտուտի այնպիսի մոդել, որը կլինի հայաստանյան իրավական համակարգին առավել համահունչ՝ հաշվի առնելով ԵԽ-ի կողմից ստացված կարծիքը:

7) ՀՀ արդարադատության նախարարը 2024 թվականի հունիսի 28-ին ընդունել է թիվ 378-Ն հրամանը՝ երեխայի տեսակցության և երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու պահանջների հարկադիր կատարման ընթացակարգերի մասին (Գործողություն 10.3): Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ ԱՆ-ը իրականացվել է մշտադիտարկում, որով գրանցվել է բողոքների թվաքանակի նվազումը: Սակայն, տեսակցության խախտումների նվազման վերաբերյալ վիճակագրություն չի վարվել: Վիճակագրություն վարվել է միայն բողոքների հիման վրա:

Առաջարկ

Բարելավել կատարողական վարույթի շրջանակներում երեխայի տեսակցությունների ապահովման մեխանիզմները: Ընդլայնել ՀՀ արդարադատության նախարարի 2024 թվականի հունիսի 28-ի թիվ 378-Ն հրամանով սահմանված կարգը՝ ներառելով երեխայի տեսակցության ապահովման ընթացակարգերի խախտումների վիճակագրության վարման և մշտադիտարկման մեխանիզմներ: Մասնավորապես, ներդնել վիճակագրական տվյալների հավաքագրման միասնական մեթոդաբանություն՝ ապահովելով տարբեր մարմինների կողմից հավաքագրվող տվյալների համադրելիությունը: Մշակել երեխաների իրավունքների պաշտպանության վիճակագրական ցուցանիշների համակարգ՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա, ապահովելով դրանց արդյունավետ օգտագործումը քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացում: